



8252 N1390
Վ. ԱՆԵԳԻՐԵՎ

ԿՈՎԿԱՍՑԱՆ
ԿԱՐՄՐԱԴՐՈՇ
ԲԱՆԱԿԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОУЧЕНИЯ
Ленинских Наук
СССР

355

U-64

«ՁԱԿԿՆԻԳԱ»

1928 N534
1 MAR 2010

U
C22421

Բ. Գ. Կ. Բ.-ի X սարկարձի անակասարուքյան Հանձնա-
խումբ՝ Ս. Ս. Խ. Ֆ. Հ. Գարձկաճիկն կից

355

Պրոֆեսարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

U-64

Վ. ՍՆԵԳԻՐԵՎ

ԿՈՎ ԿԱՍՅԱՆ
ԿԱՐՄՐԱԴՐՈՇ
ԲԱՆԱԿԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



«ՁԱԿԿՆԻԳԱ»

1 AUG 2013

40.504

В. Снегирев
Кавказская Краснознаменная
Армия
«3 А К К Н И Г А»

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՍՈՒՐՆ Ե

1917 թվականի նոյեմբերին Ռուսաստանի բան-
վորներն ու գյուղացիները կոմմունիստական կուսակ-
ցության ղեկավարութեամբ տապալեցին բուրժուա-
զիայի իշխանութիւնը և հիմնեցին վողջ յերկրագնդի
վրա առաջին պրոլետարական պետութիւնը: Բանվոր-
ներն ու գյուղացիները դարձան տեր ու տնօրեն Սոր-
հրդային պետութեան մեջ. նրանց ձեռքն անցան՝ ամ-
բողջ հողը, գործարանները, բանկերը, հաղորդակցու-
թեան ճանապարհները:

Ռուսաստանի այդ հեղափոխութիւնը սկիզբն եր
համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան,
վորը պեաք է վոչնչացնի բուրժուազիայի իշխանու-
թիւնը վողջ յերկրագնդի վրա և վորից հետո աշխա-
տավոր մարդկութիւնը, ազատագրված բուրժուազիայի
ձնշումից, կկառուցե աշխատանքի թագավորութիւնը,
կոմմունիստական հասարակութիւնը:

Հասկանալի յե՛ ուսական բուրժուազիան, վորը
հեղափոխութիւնից հետո զրկվեց թե՛ իշխանութիւ-
նից, թե՛ հափշտակութեամբ իր ձեռք բերած հարստու-
թիւններից, չէր կարող հաշտվել պրոլետարական հե-
ղաշրջման հետ և սկսեց կատաղաբար կոխի մղել իշ-
խանութեան գլուխն անցած բանվորների ու գյուղա-
ցիների դեմ: Համաշխարհային բուրժուազիան, լավ



57037.66

ըմբռնելով, վոր պրոլետարական հեղափոխությունը Ռուսաստանում նշանակում է ամբողջ բուրժուական աշխարհի կորստյան սկիզբը, ոգնության հասավ ուսական բուրժիազիային՝ թե փողով, թե գորքերով և թե ամեն տեսակ ռազմամթերքով: Սկսվեց բանվորների ու գյուղացիների համար ծանր կռիվ՝ հանուն աշխատավորների իշխանության գոյության իրավունքի: Կռիվը պարզապես անհավասար էր. մի կողմից հանդես յեկան լավ կրթված, ցարական կարգապահությամբ մարզված, մինչև ատամները զինված, պատերազմին ընտելացած սպիտակ գվարդիական, յերբեմն ամբողջապես սպաներից կազմված վաշտեր: Համաշխարհային բուրժուազիայի վողջ ոգնությունը նրանց կողմն էր: Բոլոր զորեղները, բոլոր զիտնականները, բոլոր նշանավորները սև վոհմակով դուրս յեկան բանվորների ու գյուղացիների դեմ: Մյուս կողմից յերիտասարդ, դեռ ևս չամբապնդված, անփորձ Խորհրդային իշխանություններ և նրա կազմակերպած աշխատավորները, վորոնք դեռ հնարավորություն չունեին՝ սովորելու վոճ պետությունը կառավարելու գործը, վոճ էլ պատերազմական արվեստը: Վորտեղով անցնում էին համաշխարհային իմպերիալիզմի կողմից պաշտպանված սպիտակ գվարդիական վաշտերը, աշխտեղ հողը կրկին անցնում էր կալվածատիրոջը, կապիտալիստը նորից իր ձեռքն էր առնում գործաբանները: Հազարավոր կախազաններ էին շինվում աշխատազաններում, ուր հաստատվում էր բուրժուազիայի իշխանությունը:

Թվում էր, թե աշխատավորության թշնամիների սև վոհմակով նորից յուր ձեռքը կձգի իշխանությունը

ու յերկար տարիներ կհաստատի յուր տիրապետությունը Ռուսաստանում: Բայց այդ չէր կարող տեղի ունենալ: Հաղթող պրոլետարիատը Կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ հակայական աշխատանք կատարեց սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործում և իր բոլոր ստեղծագործական ույթերը առաջ քաշեց՝ կազմակերպելու յուր Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը:

Խորհրդային իշխանության առաջին զինված ույթերը—Կարմիր-գվարդիական վաշտերը հաջողությամբ կավում էին սպիտակ-գվարդիականների դեմ աշխատանակ, յերբ պրոլետարական հեղաշրջումից ցընցված հակահեղափոխության ույթերն ևս դեռ բավականաչափ կազմակերպված չէին: Կարմիր Գվարդիան պրոլետարական հեղափոխության առաջին գնդն էր. մի գնդ, վորը բավական ծանր հարված հասցրեց սպիտակ-գվարդիականներին:

Բայց այն չափով, վորչափ համաշխարհային բուրժուազիայի հովանավորության տակ հետզհետե ավելի ու ավելի էին կազմակերպվում հակահեղափոխության ույթերը, Կարմիր Գվարդիան հետզհետե ավելի քիչ էր ընդունակ դառնում հուսալի պահապանը լինելու պրոլետարական պետության:

Առանց ամբապնդում կարգապահության, առանց մեկ հրամանատարության, վորը կարողանար հմուտ կերպով ընտրել հակառակորդի աշխտեղերը, վորոնց պետք լիներ հարվածել ամբողջ ուժով,— Կարմիր Գվարդիան իր բովանդակ հերոսությամբ հանդերձ չէր կարող լուծել պրոլետարական հեղափոխության նվաճումների պահպանման պատասխանատու խնդիրը:

Յեւ Սորհրդային իշխանությունը սպիտակ-գվար-գիականների հարվածների տակ, թնդանութների վո-րտաի ու գնդացիների ճարճատյունի տակ սկսեց ստեղծել կանոնավոր կարմիր Բանակ, կազմակերպե-լով ու վերածելով այն կանոնավոր ռազմական միա-վորների, վորոնք ընդունակ էյին դիմադրել բանվոր-ների ու գյուղացիների զազանացած թշնամիների տեխնիկային և փորձառությանը: Բանվոր զասակար-գըն ու գյուղացիությունը Բանակի շարքերը ղրկեցին իրենց լավագույն զավակներին, Կոմմունիստական կուսակցությունը Բանակին տվավ յուր լավագույն ույժերը, վորոնք շարկապեցին Կարմիր-Բանակային զանգվածները և կազմեցին նրանցից այն պողպատե պատը, վորին զարնվելով փշրվեցին հայրենի ու հա-մաշխարհային բուրժուազիայի սվինները: Յերկարատե քաղաքացիական պատերազմը, վոր տեղի ունեցավ Ռուսաստանում 18—20 թվականներին, միշտ հաղ-թությամբ չէր վերջանում Սորհրդային Ռուսաստանի աշխատավորների համար: Ավելի վաղ ու լավ կազմա-կերպված սպիտակ-գվարդիան, ոգտագործելով վողջ համաշխարհային բուրժուազիայի հարյուրամյա փոր-ձառությունը, շատ անգամ ամենածանր հարվածներն էր հասցնում մատղաշ Կարմիր Բանակին: Շատ արյու-նոտ զոհեր տվին աշխատավորները իրենց կատաղի թշնամիներին հաղթել սովորելուց և ռազմական փոր-ձառություն ձեռք բերելուց առաջ: Հատկապես ծանր էր այն, վոր մատղաշ Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակը չէր կարողանում մի անգամից ստանալ յուր սեփական հրամանատարների կազմը, վոր մոտ լիներ Կարմիր-Բանակային զանգվածին իր հայացքներով,

վոր տաներ յուր հետևից այդ զանգվածներին, վոգեք-րեր նրանց ու մղեր դեպի հեղափոխական սխրագոր-ծության: Սորհրդային իշխանությունը գրավեց ու առաջ քաշեց վորպես հրամանատարներ ցարական բա-նակի նախկին սպաներին, վորոնք փորձված էյին պա-տերազմական գործում: Այդ զինվորական մասնագետ-ների ույժերը հարկ յեղածին պես ոգտագործելու հա-մար՝ Սորհրդային իշխանությունը զորամասերում նը-շանակեց բանվորների ու գյուղացիների յուր լավա-գույն զավակներին—զինվորական կոմիսարներին: Այդ կոմիսսարներն աշալուրջ կերպով հետևում էյին, վոր զինվորական մասնագետներն իրենց գիտությունն ոգտագործեն հոգուտ բանվորների ու գյուղացի-ների գործի: Նրանք նույնպես, հենվելով բանակում կազմակերպված կոմմունիստական բջիջների վրա, տանում էյին ամենուրյա լայն աշխատանք՝ բացատրե-լու բանվորների ու գյուղացիների պարտականությունն այդ ծանր կռվի մեջ, վորը պետք էր մղել քաղցի, ցրտի, ընդհանուր ավերածության պայմաններում, վորն առաջ էր յեկել համաշխարհային և քաղաքա-ցիական պատերազմի շնորհիվ:

Լինում էյին դեպքեր, յերբ հրավիրված մասնա-գետները չէյին արդարացնում այն վստահությունը, վոր ցույց էր տալիս նրանց Սորհրդային իշխանու-թյունը, և Կարմիր Բանակի մասերը զավաճանորեն հանձնում էյին թշնամիներին: Բայց նրանց մեծ մասը իր ույժերի և գիտության չափով ծառայում էր բան-վորների ու գյուղացիների գործին: Շատերն իրենց մահվամբ հաստատեցին իրենց հավատարմությունը աշխատավորների գործին: Բացի այդ, բանակի կազ-

մակերպման հենց առաջին որերից խորհրդային իշխանությունը ձեռք առավ բոլոր միջոցները՝ ստեղծելու համար իր սեփական բանվորա-գյուղացիական հրամանատարները կազմեր: Հին բանակի հազարավոր նախկին զինվորներ, յենթասպաներ և նույնիսկ Բանակում յերեք չծառայած բանվորներ ու գյուղացիներ անցնում էին Կարմիր Բանակի մասերի գլուխը և լիովին հաջողութամբ ղեկավարում նրանց ռազմական գործողությունները: Կարճատև դասընթացներն շտապ կարգով բանվորներին ու գյուղացիներին պարաստում էին հրամանատարներ: Այդպիսով Կոմունիստական կուսակցության ղեկավարութամբ, պրոլետարիատի շահախով, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակն ստեղծեց յուր սեփական հրամանատարների կազմը և սովորեց հաղթել իր թշնամիներին: Բացի ռազմական աշխատանքից, Կարմիր Բանակը բնակչության մեջ տանում էր համառ բացատրական աշխատանք, վորը հնարավորություն էր տալիս ըմբռնելու, թե ում կողմն է ճշմարտությունը: Պեռք է ընդ սմին նշել նաև, վոր սպիտակ-գվարդիական բանակները վատ ագիտատորներ չէին հոգուտ խորհրդային իշխանության նյն տեղերում, ուր նրանք թեկուզ կարճ ժամանակով հաստատում էին իրենց տիրապետությունը: Գեներալի և կալվածատիրոջ մտրակի տակ ճաշակելով կյանքի դառնությունները, աշխատավոր բնակչությունը ընդ միշտ թշնամի էր դառնում սպիտակ իշխանությանը: Այսպես ուրեմն, Կարմիր Բանակը, սպիտակ-գվարդիական զորքերի մասերին հասցրած իր ծանր ռազմական հարվածները շահկապելով անընդհատ տարվող քաղաքական և լուսա-

վորության աշխատանքի հետ, փշրեց սպիտակ-գվարդիական զինված ողակը, ջախջախեց ճերմակ զորքերի անթիվ հրոսակներին և հաստատեց վողջ յերկրագնդի մի վեցերորդի վրա խորհուրդների Կարմիր դրոշակը: Չոգնեցին վոճ սպիտակ-գվարդիականների հին փորձառությունը, վոճ էլ համաշխարհային բուրժուազիայի հզոր ոժանդակությունը: Բոլորին ջախջախեց, ամեն ինչ խորտակեց Կարմիր Բանակի յերկաթե ձեռքը:

Ահա թե ինչու ամենայն իրավամբ կարելի է Կարմիր Բանակը կոչել պրոլետարական ղեկատուության սուրը: Ահա թե ինչու յերեք չեն մոռանա խորհրդային Միության և վողջ աշխարհի աշխատավորները հերոսական Կարմիր Բանակի սխրագործությունները:

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի փառապանծ վաշտերից մեկի, Կովկասյան Կարմրադրոշ Բանակի, նրա պատմության ու կյանքի մասին և պատմվում այս գրքույկի մեջ:

XI-րԴ ԲԱՆԱԿԻ ԿՈՒՎԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒ- ՅՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Անդրկովկասի աշխատավորները լավ են ճանաչում Կովկասյան Կարմրադրոշ բանակը: Հազարավոր թեղերով կապված են նրանք այդ բանակի հետ ամենորոյա աշխատանքի մեջ: Գիտեն նրա գործերն ու մատուցած ծառայութիւնները Սորհրդային իշխանութիւնը հաստատելու գործում: Հեղափոխական ցույցերի ժամանակ շատ անգամ են կանոնավոր շարքերով անցել կարմիր-բանակային գորասյուները՝ խառնված Անդրկովկասյան բանվորների ու գյուղացիների կանոնավոր շարքերի հետ:

Բայց տակաւին ամենքը չգիտեն մեր բանակի, վորպէս Սորհրդային Միութեան բանվորա-գյուղացեական միասնական Կարմիր բանակի փառապանծ վաշտերից մեկի հերոսական պատմութիւնը: Մինչդեռ Կովկասյան Կարմրադրոշ բանակի ռազմական պատմութիւնը խիստ հետաքրքիր է և ուսանելի: Սորհրդային Միութեան բանվորներն ու գյուղացիները, վորոնք կռվում էին Կովկասյան Կարմրադրոշ բանակի շարքերում, յերևան բերին այնպիսի սխրագործութիւններ, այնպիսի անձնազոհ հերոսութիւն, այնպիսի ծանր զրկանքներ կրեցին աշխատանքի բարորութեան համար, վոր բանակի պատմութիւնը պետք

է խմանա յուրանջնայուր վոք, ով իր ուժերը ներածին չափ նպաստում է Սորհրդային Միութեան սոցիալիստական շինարարութեանը:

Կովկասյան Կարմրադրոշ բանակը յուր սկիզբն առել է Հյուսիսային Կովկասում 1918 թվականին:

Դա այն ժամանակն էր, յերբ առաջին անգամ Հյուսիսային Կովկասում կազմակերպվեց մատղաշ Սորհրդային իշխանութիւնը: Պրոլետարական հեղաշջումը, վորը տապալեց բուրժուազիայի իշխանութիւնը կենտրոնական Ռուսաստանում, սպիտակ-գվարդիականների զանգվածները շարտեց ծայրամասերը—Դոնի շրջանը, Կուբանը, Տերեկի շրջանը: Այդ կողմերը փախած սպիտակ-գվարդիականները գտան իրենց համար բարեհաջող պայմաններ: Հարուստ կազակութիւնը, վոր ցարական ռեժիմի որոք ոգտվում էր մի շարք առանձնաշնորհումներից, հակառակ էր տրամադրված Սորհրդային իշխանութեան դեմ: Սորհրդային իշխանութեան ներկայացուցիչների յերբեմն անշնորհ գործողութիւնները դժգոհների բանակն էլին նետում նաև միջակ կազակութիւնը: Բացի այդ, Հյուսիսային Կովկասում ապրում էին նաև վոչ կազակներ, այսպէս կոչված յեկվորներ, վորոնք չէին ոգտվում վոչ մի արտոնութիւնից, և վորոնց հարաբերութիւնը այդ պատճառով էլ վաղ ժամանակներից թշնամական էր հարուստ կազակութեան հետ:

Համաշխարհային պատերազմի վախճանը Կովկասյան ճակատում, Հյուսիսային Կովկաս նետեց հեղափոխականորեն տրամադրված զինվորների ու կազակների մեծ զանգվածներ, այլ և Սորհրդային իշխանութեան յերգվյալ թշնամի բազմաթիւ սպիտակ-գվար-

դիական սպաներ: Հյուսիսային Կովկասում Խորհրդային իշխանության առաջին կազմակերպողն, ի հարկե, խոշոր քաղաքների պրոլետարիատն էր. այսինքն Ռոստովի (Դոնի վրա), Գրոզնու, Կրասնոդարի, Նովորոսիյսկի, Մտավրոպոլի: Այդպիսով 1918 թվականին Հյուսիսային Կովկասում մենք տեսնում ենք յերկու թշնամի բանակներ: Մի կողմից՝ խորհուրդների կազմակերպված պրոլետարիատը, և նրա շուրջը յեկվորների, այլև յերիտասարդ կազակության ու զինվորների զանգվածները, վորոնք յեկել էյին համաշխարհային պատերազմի ճակատից: Կոմմունիստական կուսակցության մտքերը, Խորհրդային իշխանության գործողությունները նրանց հասկանալի էյին, նրանց սրտին մոտիկ: Մյուս կողմից՝ նրանց դեմ կանգնած էյին սպիտակ-գվարդիական կազակները—գոռբաները, Ռուսաստանի բոլոր կողմերից փախած սպիտակ-գվարդիական սպաները, խոշոր քաղաքների բուրժուազիան և գերմանական բռնազրավող (окупацион) զնդերը: Հասկանալի չէ, վոր այդ թշնամի բանակների միջև հենց մի անգամից սկսվեց անողոք պատերազմ: Այդ պատերազմում սպիտակ-գվարդիան ուներ այն առավելությունը, վոր նա կազմակերպված էր թեև վոչ մեծ, բայց ամրակուռ մարտական կանոնավոր վաշտերի մեջ՝ փորձված հրամանատարությամբ: Սպիտակ-գրարդիական վաշտերից միքանիսն ամբողջապես բաղկացած էյին հին սպաներից, վորոնք մահվան չափ ատոււ էյին Խորհրդային իշխանությունը: Գազանային ատուլությունը դեպի աշխատավորները՝ միացած ուղղակի մեծ փորձառության հետ՝ այդ վաշտերը սպառնալից էր դարձնում Խորհրդային իշխանության վաշ-

տերի դեմ մղած կռիվներում: Խորհրդային զորքերը թվով գերազանց էյին, բայց նրանք կազմակերպվածության տեսակետից շատ յետ էյին սպիտակ-գվարդիականների համեմատությամբ: Նրանք ներկայացնում էյին մի զանգված առանձին-առանձին պարտիզանական վաշտերի, վորոնք բոլորովին կապված չէյին միմիանց հետ և չէյին յենթարկվում մեկ հրամանատարության: Բացի դրանից, այդ վաշտերն ունէյին անագին սայլաշարքեր, վորոնց հետ մեկտեղ շարժվում էյին կովոզների ընտանիքները, վորովհետև նրանց տանը թողնելը կնշանակէր դատապարտել նրանց անկասկած տանջալից մահվան: Հաղթված սպիտակ գվարդիան զազանաբար էր վարվում մարտիկների և իրենց ընտանիքների հետ: Բայց այնուամենայնիւ այդ անշատ վաշտերը՝ համակված հեղափոխական վոգեւորությամբ՝ հաճախ ծանր հարվածներ էյին հասցնում սպիտակ-գվարդիականներին:

Շատ անգամ ամրակուռ սպայական զնդերը փախուստի էյին դիմում հեղափոխական վաշտերի ծանր հարվածների տակ: Բորբոքված կռիվների մեջ մի շարք քաղաքներ, խոշոր ստանիցաներ ու յերկաթուղային կայարաններ ձեռք ձեռք էյին անցնում: Հեղափոխական կովի կազմակերպողն ու վոգեւորողը, ինչպես ամենուրեք Ռուսաստանում, Հյուսիսային Կովկասում ևս Կոմմունիստական կուսակցությունն էր: Կուսակցության Հյուսիսային Կովկասի Յերկրային Կոմիտեուը շատ լավ էր հասկանում, վոր սպիտակ-գվարդիականների դեմ մղվող կովի հաջողության համար անհրաժեշտ է բոլոր անշատ վաշտերի միացումը: Ուստի և մենք տեսնում ենք, թե ինչպես մեծ դժվարությամբ

անջատ վաշտերից, հակառակ առանձին հրամանատարները ընդդիմադրութեան, սկսում ե ձեռվորվել տասնմեկերորդ բանակը, վորն այժմ հայտնի յե ամենքին Կովկասյան Կարբադորշ Բանակ անունով:

XI-րդ բանակի հիմքը կազմում եր նախկին կազակային յասաուլ Սորոկինի հեղափոխական վաշտը, իսկ ինքը Սորոկինը նշանակված եր XI-րդ բանակի հրամանատար: Պարտիզանական հակուճիներն առանձին վաշտերի, վորոնք չեյին ցանկանում մի ընդհանուր հրամանատարութուն և գործում եյին իրենց հայեցողութեամբ զիտցածի համաձայն, չափազանց կասեցնում եյին միացման անհրաժեշտ աշխատանքը: Մինչդեռ ամենածանր պայմաններում ընթանում եր XI-րդ բանակի կազմակերպումը, սպիտակ-զվարդիան ժամանակ վաստակեց ամրապնդվելու և յուր հերթին դարձավ չափազանց խոշոր կարգապահ կամավորական բանակ, վորը զեպի ինքն եր քաշում հակա-հեղափոխականների նորանոր ուժեր: Այդ սպիտակ-զվարդիական բանակը հարձակվում եր XI-րդ բանակի մերթ այս, մերթ այն տակավին լավ չկազմակերպված վաշտի վրա և պատճառում նրան ծանր պարտութուններ:

Այդ ժամանակաշրջանում մենք կարող ենք նշել XI-րդ բանակի վատ զինված և ուղմամթերքից զուրկ մասերի ցուցադրած ամենախոշոր հերոսութունը: Մենք գիտենք շատ զեպքեր, յերբ շնորհիվ փամփուշտի բացակայութեան՝ զորամասերը նետվում եյին սվինամարտի մեջ թշնամու լավ զինված զորքերի հետ և նրանց խուճապային փախուստի մատնում: Հենց այդ ժամանակին և վերաբերում միանգամայն բացառիկ արշա-

վանքը, այսպես կոչված, Տամանյան Բանակի, վորը ճնշող թշնամու հարվածների տակ, Կուբանի հակա-հեղափոխական ապստամբությունների կրակի մեջ, անցավ Սև ծովի ափով, Արմավիրի տակ միացավ նահանջող XI-րդ բանակին: Թշնամիներն աշարուրջ կերպով փորձում եյին ջախջախել Կարմիր Տամանցիների զորասյուները, վորոնք իրենց ընտանիքներով՝ կանանցով, յերեկաներով, գառամյալ ծերունիներով ու պառաջներով, իրենց կահ-կարասիքով շարժվում եյին, վորպես յերկաթե հեղեղ՝ միանալու արյունաքամ XI-րդ բանակին:

Կարմիր հերոսների Տամանյան բանակը սպիտակ թշնամիների զիակներով ծածկեց յուր փառապանծ ճանապարհը: Մի քանի կռիվներում, յերբեմն առանց մի հրաձգութեան, անզեն ձեռներով նա թշնամուց խլեց վոչ միայն հրացաններ, այլ և թնդանոթների վոջ մարտկոցներ:

Նրանց հերոսությունը մաքառեց ու հաղթահարեց ամեն ինչ—և՛ գաղազած թշնամիների կատաղությունը, և՛ քաղցը, վոր մի քանի ուր տանջում եր մարտիկներին: Ամեն ինչ կրեցին, ամեն տեսակ զժվարություններ հաղթահարեցին կարմիր Տամանցիները և միացան XI-րդ բանակի մասերին: Դրանից հետո XI-րդ բանակը մեծացավ մարդկանց քանակով: Բայց պետք ե նրկատի ունենալ, վոր բանակը զեռ լավ կազմակերպված չեր, վոր իր կազմակերպությունը նա գլուխ բերավ թշնամու հարվածների տակ, վոր նա վոչ մի կապ չուներ կենտրոնական կառավարութեան հետ և նրանից չեր ստանում ոգնություն: Նա չուներ կանոնավոր հիմքերի վրա դրված հայթայթուճի և ստիպված եր

անհրաժեշտ պարենը բռնազրավումով վերցնել բնակչուկթյունից. մի բան, վոր ավելի յեր նպաստում հակահեղափոխական թշնամիների բազմանալուն: Ջինվորական համազգեստ գոյուկթյուն չուներ. մարտիկները հագնում էին տապճակ (ձիու մեջքին ձգվող թաղիք), կանանց զգեստներ, միայն թե ծածկել կարողանային իրենց մարմինը: Հատկապես կործանարար եր փամփուշտների և ուժեղ բացակայուկթյունը, վոր պիսիք անհնար եր ձեռք բերել: Մեծ չարիք եր և՛ այն, վոր XI-րդ բանակի մասերում այդ ժամանակ գրեթե բոլորովին չեր տարվում իսկական քաղաքական աշխատանք, վորը բացահայտ գիտակցուկթյուն և մտցնում մարտիկների շարքերում: Կոմիսարներ, վորոնք կկարողարային տանել այդ աշխատանքը, չկային բոլոր գործառնում. Կոմունիստական կուսակցուկթյան ձևավորված, ամրակուռ բլիշներ գրեթե չկային: Իսկ այդ բլիշներն, ինչպես հայտնի յե, ամենախոշոր դերն էին խաղում Ռուսաստանի Կոմ. կուսակց. բանակի զորքերի խտացման և հեղափոխական ամրապնդման գործում: Ճիշտ և, առանձին մասերում կային կոմունիստներ, վորոնք այդ ամենաժանր պայմաններում կատարում էին իրենական—բացատրական խոշոր աշխատանք և պայքարում պարտիզանուկթյան բոլոր բացասական կողմերի դեմ, վորոնք կործանիչ ազդեցուկթյուն էին անում բանակի վրա, թուլացնելով նրա ռազմունակուկթյունը:

Ընկ. Լեվանդովսկին (ներկայումս հրամանատար Կովկասյան Կարմրադրոշ Բանակի) պատմում և, թե ինչպես իրեն Հրամանատար նշանակելու ժամանակ ինքն առիթ ունեցավ ընդհարվելու մի վաշտի հետ,

57037-66


վորը միտինգում քննում եր՝ ճանաչել, թե՞ չճանաչել նոր Հրամանատարին:

XI-րդ բանակի մարտիկների մասին կարելի յե ասել, վոր նրանք իսկապես հեղափոխական մարտիկներ էին հանուն աշխատավորուկթյան դատի: Սակայն նրանց պակասում եր գիտակցուկթյունը, հեղափոխական կազմակերպվածուկթյուն, վորն ավելի յե կրկնպատկում բանակի ույթերը և նրան զարձնում անպարտելի:

Կուսակցուկթյան Յերկրային Կոմիտեար և ռայոնների կոմիտեաները, վորոնց բովով եր անցնում բանակը, ձեռք էին առնում բոլոր միջոցները՝ կարգավորելու քաղաքական աշխատանքը, բայց հանգամանքներն աննպաստ էին: Այնուամենայնիվ պետք և ասել, վոր իր կազմակերպման առաջին որբերից XI-րդ բանակը գտնվում եր Կոմունիստական կուսակցուկթյան և որա առանձին ներկայացուցիչների—կուսակցուկթյան անդամների ղեկավարուկթյան տակ, վորը, ճիշտ և, յերբեմն անբավարար եր լինում:

ԴԺՎԱՐԱՆՑ ՈՒ ԾԱՆՐ ՃԱՆԱՊԱՐՇԸ ԱՍՏՐԱԽԱՆԻ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՎ

Նոր ույթերի ժամանումը հանձին Տամանյան բանակի հնարավորուկթյուն տվավ XI-րդ բանակին՝ ղիմելու հարձակման և մինչև իսկ գրավելու մի քանի կետեր, վորոնք առաջ թողնվել էին սպիտակ-զվարդիականներին: Այդպես որինակ, յերկարատե կռիվներից հետո գրավված եր Ստավրոպոլը: Սպիտակ-զվարդիականների բազմաթիվ փորձերը՝ յեա խելու այն՝



անհաջողութեան մատնութեան: Բայց դ՛ ծանր արշա-
վանքներէց տանջված, պարենավորումից, փամփուշ-
տից և ոււմբերից զուրկ, սպիտակ-գվարդիականներով
շրջապատված Xl-րդ բանակի վերջին պոսթիկումն էր:
Բանակի ռազմունակութեանը հասած ծանր հարվածի
հետեանքով դավաճանեց Հրամանատար Սորոկինը: Նա
արդեն բանակի կազմակերպման առաջին որերից դժ-
վարացրեց այն ղեկավարութիւնը, վորն իրականա-
ցրեց Հյուսիսային Կովկասյան հանրապետութեան Կեն-
դրոնական Գործադիր Կոմիտեաւը: Նոյեմբերին նա
նույնիսկ գնդակահարեց նրա մի քանի անդամներին:

Նա կամենում էր միանգամայն անկախ լինել և
վոչ վոքի չենթարկուի: Իսկ արտահայտութիւններէց
մեկն էր այն պարտիզանութեան, վորն այդ ժամանակ
Կարմիր բանակի կազմակերպման հիմքն էր կազմում:

Սորոկինը ձերբակալուեց ու գնդակահարուեց Ստաւ-
րոպոլում: Բայց Հրամանատարի դավաճանութիւնն,
իհարկե, քայքայեց մարտիկներէ շարքերը, կասեցրեց
բանակի առաջախաղացումը:

Դրանից ողորակեց թշնամին և հարձակուեց ավելի
թույլ և քայքայված մասերի վրա: Նրանք չկարողա-
ցան դիմանալ և սկսեցին նահանջել:

Նահանջը բավականաչափ կազմակերպված չէր:
Առանձին գորամասերի հրամանատարները զազարեցին
կատարելու բանակի հրամանատարութեան կար-
գադրութիւնները և սկսեցին նահանջել իրենց սեփա-
կան հայեցողութեամբ:

Բանակը նորից ջլատուեց մի շարք առանձին մա-
սերի, վորոնք կորցրին իրար հետ ունեցած կապը:
Իսկ ռազմաճակատի շտաբը (վոր գտնվում էր Աստ-

րախանում՝ բանակից անջատված ճանապարհազուրկ,
ավագոտ անապատով, չկարողացավ ցույց տալ գրեթե
վոչ մի ոգնութիւն, թեպետ և փորձում էր անել այդ:
Ի լրումն այդ ամենի՝ արդեն վաղուց սկսված բծավոր
տիֆի համաճարակը սաստկացավ չտեսնված չափերով
և բանակի շարքերից խլեց հարյուրավոր ու հազարա-
վոր մարտիկներ: Թշնամիներն ուժեղացրին իրենց
ճնշումը, և բանակը Կուբանի ու Տերեկի պողաբեր
դաշտերից հեռոճետե ստիպված յեղավ քաշվել դեպի
Աստրախանի անջրդի անապատները: Սկսվեց Կարմիր
բանակի պատմութեան մեջ իր լիճվարութեամբ չլսված
նահանջը առաջին մարտիկների, վորոնք կուլում էին
հանուն Խորհրդային իշխանութեան Հյուսիսային Կով-
կասում: Զորամասերը Ստաւրոպոլից անցան Ցարի-
ցին ու Աստրախան, և Պրոխլադնիի, Մոզդոկի ու Ղըզ-
լարի վրայով՝ Աստրախան: Այդ նահանջը կատարվեց
ընկ. Լեվանդովսկու ղեկավարութեամբ, վորը նշանակ-
ված էր Բանակի հրամանատար: Տանջված մարդիկ
հաճախ անձնատուր էին լինում խուճապի: Իսկ դրա
հետ մեկտեղ բանակի շարքերը խճկված պրովոկատոր-
ները տեսնում էին իրենց սև գործը, զրգոում մաս-
սաներին ղեկավարների դեմ: Անհրաժեշտաբար պետք
էր անցնել հակահեղափոխական ապստամբութիւն-
ների ողակով: Անջրդի անապատով նահանջելու հենց
առաջին մոմենտից բանակը, վորպես ռազմական ուժ,
զազարեց գոյութիւն ունենալ: Ահա թե ինչ էր գը-
րում այդ ժամանակ ընկ. Լենինին կարմիր զորքերի
գրութեան մասին ընկ. Որջոնիկիձեն, վորը այն
ժամանակ հեղափոխական կովի ղեկավարներից մեկն
էր Հյուսիսային Կովկասում:

«Տասնմեկերորդ բանակը չկա... Չկա ուժեր ու փամփուշտ: Փող չկա: Վլադիկավկազը, Գրոզնին մինչև այժմ չեն ստացել և՛ վոչ մի կուպեկ փող: Վեց ամիս ե, ինչ կռիվ յենք մղում, ամեն մի փամփուշտ գնում ենք հինգ ուրբով... Թանկագին Վլադիմիր Իլիչ, մահվան չափ վտանգավոր մոմենտին առաքում ենք Ձեզ վողջույն և սպասում Ձեր ոգնության»:

Նահանջը տեղի յեր ունենում ամենաանբարեհաջող ժամանակը. հունվար ամիսն եր—ձմեռվա խորագույն միջոցը: Խոսքն անցոր ե նկարագրելու այն ամբողջ սարսափը, վոր կրեցին XI-րդ բանակի մարտիկներն իրենց ծանր ճանապարհն անցնելիս: Անապատի ցուրտ քամին վատ հաղնված մարտիկների մինչև վոսկորներն եր թափանցում: Նրանք տասնյակներով ու հարյուրներով սառեցին ճանապարհին, իրենց դիակներով ծածկելով Աստրախանի մոայն անհամբույր անապատը: Բժավոր տիֆը բանակի մասերից կորզեց հազարավոր լավագույն, ավելի գորեղ մարտիկներին: Ճանապարհին հազվադեպ եյին պատահում առանձին գյուղեր, վորոնք կիսով չափ ամայացած եյին տիֆի համաճարակից: Այդ գյուղերում միանգամայն անհնարին եր ստանալ վորև ե սնունդ: Բանակը հեղձետե հալվում եր, թողնելով ցուրտ անփաստանում իր մեռած ընկերներին: Թշնամին արզեն չեր հետապնդում XI-րդ բանակին, թողնելով, վոր ցուրտը, քաղցն ու տիֆը վոչնչացնեն նրա մնացորդները: Հերոսության, անձնագոհության և իրար վերաբերմամբ ընկերական ոգնության շատ որինակներ

ցույց տվին մարտիկներն այդ սոսկալի որերին: Բանակն ստիպված եր թողնել սայլերը, պայթեցնել թընդանոթները, վորովհետև այլ ևս անհնար եր տանել իր հետ: Այնքան մեծ եր մեռնող մարտիկների հեղափոխական պոթիկումը, վոր նրանցից շատերն ընկնելով իրենց վերջին մահվան անկողնում, ցրտաշունչ ավազի վրա, գոչում եյին իրենց ընկերներին. «Հիշեցեք մեզ, յերբ վերադառնալու լինեք», «Յես հավատացած եմ, վոր հեղափոխությունը կհաղթի»: Ինքը քաղցից մեռնելիս՝ մարտիկը յուր վերջին պատառը ղեջում եր հիվանդ ընկերովը: Մահամեծքը ջանում եր իր ցնցոտիներով տաքացնել իր հարևանին:

Վերջ ի վերջո Աստրախան հասան տանջված ու դզված մասերի մնացորդները: Խորհուրդների կարմիր դրոշակը Հյուսիսային Կովկասում դեն եր շարժված, և XI-րդ բանակի մարտիկների արյամբ ներկված հողի վրա բարձրացած եր գեներալների սպիտակ դրոշակը: Այդպես վողբալի վախճան ունեցավ Հյուսիսային Կովկասում հանուն Խորհրդային իշխանության մարտնչող աշխատավորության կռիի առաջին գրվազը: Այդպես XI-րդ բանակի մարտիկներն իրենց մահվամբ ազացուցեցին իրենց հավատարմությունը խորհրդային իշխանությանը:

Աստրախանից վոչ հեռու XI-րդ բանակի մնացորդներին դիմավորեցին Աստրախանի քաղաքապետ Գորբի մասերը և Աստրախանի բանվորները:

ԱՍՏՐԱԽԱՆԸ ԶՆԱՆՁՆԵԼ

Աստրախանը, վորտեղ յեկան XI-րդ բանակի մնացորդները, այդ ժամանակ (1919 թ. մարտին) ապրում էր ծանր օրեր: Նա բռնված էր սպիտակ-գվարդիական զորքերի ողակով: Արևելքից՝ Ուրալյան տափաստաններից, Գուբյեվից նրան սպառնում էր Խլուսնեվ գնդապետի վաշտը. Հյուսիսից, Արևմուտքից և Հարավ-Արևմուտքից ճնշում էին Դենիկինյան բանակի մասերը: Աստրախանն ընկած էր պարկի մեջ: Միակ յերկաթուղագիծը, վորը միացնում էր քաղաքը Սորհրդային հանրապետության կենտրոնի հետ, ամբողջ ժամանակ գտնվում էր սպիտակ-գվարդիականների և դասալիքների բանդաների սպառնալիքի տակ: Տիֆի համաձայնակը, վորն ուժեղացել էր XI-րդ բանակի մնացորդների գալուց հետո, թուլացնում էր Կարմիր Աստրախանը պաշտպանողների առանց այդ էլ փոքրաթիվ ույժերը: Թշնամին սերտ կապ ուներ հենց քաղաքում գտնվող սպիտակ-գվարդիական տարրերի հետ: Քաղաքում տիրող սովը, շնորհիվ պարենի բացակայության, նպաստավոր դրուժյուն էր ստեղծել սպիտակ-գվարդիական ազիտացիայի հաջող գարգացման համար: Ուստի և թշնամիներով շրջապատված Աստրախանի պաշտպաններն ստիպված էին լարված աշխատանք տանել սպիտակ-գվարդիական պրավոկացիայի դեմ, վորը յերբեմն հաջողութուն էր գտնում մինչև իսկ բանվորական զանգվածների մեջ, և զինված ձեռքով խեղդել ընդհատակյա հսերական շտաբի կազմակերպած հակա-հեղափոխական ապստամբությունները: Այգորինակ ծանր պայմաններում

19 թվականի ամբողջ ամառը տեղի յեր ունենում ձևվակերպումը նոր զինված վաշտերի, վորոնք կազմակերպվում էին XI-րդ բանակի մնացորդներից, ինչպես նաև 12-րդ բանակի, վորը կոչվում էր Աստրախանի տակ: XI-րդ բանակի անունը այդ ժամանակամիջոցին չբանում է Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի պատմության եջերից: Նրա փոխարեն յերեվան է գալիս զորքերի Աստրախանյան խմբակը: Այդ խմբակի դրուժյունը Հափագանց անբարենաջող է: Զախձախելով հեղափոխության ույժերը Հյուսիսային Կովկասում, սպիտակ հրամանատարությունը հնարավորություն է ունենում այստեղ ազատված ույժերը նետել դեպի Հյուսիս: Կարմիր բանակը աստիճանաբար հեռանում է ու հեռանում: Սորհրդային տերիտորիան հետզհետե ավելի ու ավելի յե սեղմվում: Գեներալ Դենիկինը և նրա արբանյակներն այն համոզմունքն են հայտնում, թե շուտով իրենց կհաջողվի լսել Կրեմլի զանգերի հաղթական զողանջը, զանգերի, վորոնք վողջունելու յեն սպիտակ-գվարդիականների մուտքը Մոսկվա: Ընկալվ Սորհրդային իշխանության պողպատե պատվարը Հարավում—փառապանծ Ցարիցինը, վորը պաշտպանվում էր արիաբար, ինչպես առյուծ: Ավելի յե ծանրանում Կարմիր Աստրախանի կռիվը, Աստրախանի, վորը անհողողդ պահում է խորհուրդների Կարմիր դրոշակը:

Թշնամին լարում է իր բոլոր ույժերը, վորպեսզի գրավե Սորհրդային իշխանության վերջին պատվարը Ռուսաստանի Հարավում—դեպի խորհրդային Արևելքը և Արևելյան յերկրների ճնշված ժողովուրդները տանող դռների բանալին:

Մոսկվայից գալիս ե ընկ. Լենինի հրամանը, վոր շատ լավ եր գնահատում Աստրախանի նշանակութունը իբրև Խորհրդային իշխանության հենակետի. «Աստրախանը չհանձնել»: Սիրելի ղեկավարի հրամանը վահանավորեց Կարմիր Աստրախանը XI-րդ բանակի պողպատյա սվիններով, XI-րդ բանակի, վորը Աստրախանի պրոլետարիատին ղեկավարող Կոմմունիստական կուսակցության ջանքերով կրկին կազմակերպված եր 1919 թվականի ոգոստոս 14-ին:

Հին XI-րդ բանակի ֆուգորդներից կրկին կազմակերպված XI-րդ բանակին՝ վիճակված եր շատ աշխատել բոլոր ճակատներում Աստրախանի տակ: Ավելի լավ վիճված և լավ պարենավորված թշնամին, ընտրելով ռազմաճակատի համեմատաբար ավելի թույլ տեղերը, յերբեմն հասցնում եր ծանր հարվածներ: Բայց վերածնված յերիտասարդ մասերը արագ կերպով կազդուրվում եյին և պատասխան հարվածներով իրենց հերթին քաղաքից դեն եյին շարտում թշնամու ույժերը: Առանձնապես կատաղի կռիվներ տեղի ունեցան Սև Քարափի տակ, վորին տիրելը անելանելի կղարձներ Աստրախանի դրությունը: Թշնամին գերազանց ույժերով մի քանի անգամ հարձակում գործեց Սև Քարափի տակ ձգված խրամատների վրա, սակայն քաղաքը պաշտպանող Կոմմունիստական և Խորհրդային պահակային զնդերը կործանելչ հակահարված տվին Սև Քարափը վերցնելու նրա փորձերին: 1919 թվականի սեպտեմբեր 26-ից մինչև նոյեմբեր 7-ը Սև Քարափն ամեն կողմից շրջապատված եր թշնամիներով: Վնչ քաղաքապահ զորքի հարձակումները, վնչ ել Աստրախանից շարժվող մասերի փորձերը՝ ձեղքելով դուրս

գալ սպիտակ ողակի միջից՝ հաջողութուն չունեցան: Ոգովելով այն հանգամանքից, վոր XI-րդ բանակի հիմնական ույժերը շարժվել եյին առաջ՝ փրկելու Սև Քարափը, սկսում են զարգացնել զորեղ հարձակում՝ հարավ-արևմուտքից գեներալ Դրացենկոն, վորը իր զորքերին հրամայել եր «յերեք օրից հետո վերցնել Աստրախանը», իսկ արևելքից՝ Սերեժնիկովի վաշտը: Անընդհատ տևող կռիվների մեջ ամրապնդվում են XI-րդ բանակի մասերը: XI-րդ բանակը հաջող զորաշարժով ջախջախեց Դրացենկոյի և Սերեժնիկովի վաշտերը: Թշնամին ստիպված եր քաշվել Սև Քարափից, և վերջինիս փոքրաթիվ հերոսական քաղաքապահ մասը միացավ ամբողջ բանակին: Հետագայում հեղափոխությանը մատուցած նրա ծառայությունը պարգևատրվեց Կարմիր դրոշակի շքանշանով:

Հատկապես պետք ե նշել Աստրախան քաղաքի հրամանատարական դասընթացների այն ուսանողների ռազմական աշխատանքը, վորոնք, հայտնվելով ռազմաճակատի զանազան մասերում, հավատարմությամբ խիեցին ու քշեցին թշնամուն: Մեկ անգամ նրանք ստիպված եյին՝ ընթացավարաների պատվին տրված համերգից դուրս գալ և ռազմական պատրաստությամբ շարժվել չափազանց առաջ մտտեցած թըշնամու վրա:

Այդպես ե փառապանձ քաղաքի մեկ ու կես տարվա կովի պատմությունը. քաղաքի, վորն իր հաջողությամբ պարտական եր Կոմմունիստական կուսակցության անխոնջ աշխատանքին. Կոմմունիստական կուսակցության, վոր շատ ջանք թափեց Կարմիր Աստրախանի հերոս պաշտպանների կազմակերպման,

ամբապնդման և ռազմական վողին բարձրացնելու համար: Համաշխարհային պրոլետարիատի առաջնորդի հրամանը—Աստրախանը չհանձնել— Աստրախանը պաշտպանողների գիտակցութեանը հաղորդեց հաստատ համոզում իրենց ույժերի նկատմամբ և հնարավորութեան տվալ 'նրանց' պրոլետարական հեղափոխութեան հիմնական ույժերից հեռու յետ մղել զազգած թշնամու բոլոր կատարի հարձակումները: Իսկ XI-րդ բանակը ցույց տվալ, վոր նա կարող է պատվով գլուխ բերել հին XI-րդ բանակի մարտիկներին՝ մահվանից առաջ արած կտակը— Հյուսիսային Կովկաս հաղթական վերադարձի մասին:

Աստրախանյան խմբակի, իսկ հետո վերածնված XI-րդ բանակի կյանքի ու կովի այդ շրջանը հայտնի չէ այն մեծ աշխատանքով, վոր Կոմմունիստական կուսակցութեանը տանում էր՝ նոր մասեր ստեղծելու և զորական մասերի ներսում: Սկսեց կանոնավոր կերպով աշխատել բանակի Քաղաքական Բաժինը, ղեկավարելով զորամասերում կազմակերպվող կուսակցութեան բջիջները, անցկացնելով դրանց միջոցով կարմիր-բանակայինների խտացման վողջ դաստիարակչական աշխատանքը: Բոլոր գնդերում արդեն կային կոմիսսարներ—կուսակցութեան և Խորհրդային իշխանութեան ներկայացուցիչներ, վորոնք պատասխանատու էին ռազմական ու քաղաքական պատրաստութեան համար: Կարմիր-բանակայիններին կանոնավոր կերպով հայթայթում էին լրագրներ: Առանձնապես խոշոր էր դաստիարակչական աշխատանքի մեջ բանակային լրագրի, «Կարմիր Ռազմիկ»-ի դերը. մի լրագրի, վորն իր եջերում լուսաբանում էր թե բանա-

կային կյանքի և թե ամբողջ Խորհրդային հանրապետութեան կյանքի բոլոր հիմնական հարցերն ու խնդիրները: Այդ ժամանակները լայն ծավալ է ստանում ակմբային աշխատանքը: Տեղի չէ ունենում նույնիսկ մարտիկների անզրագիտութեան վերացումն:

Կարելի չէ ամենայն իրավամբ ասել, վոր յեթե Աստրախանի այն ժամանակվա ամենածանր պայմաններում բանակը զբաղվում էր և դաստիարակվում թշնամու դեմ կովելու համար— ապա դա տեղի չեր ունենում ամենից առաջ շնորհիվ կուսակցութեան աշխատանքի, այլ և նրա բջիջների, նրա կոմիսսարների, վորոնք ամենուրեք և միշտ առաջին շարքերումն էին, որինակ էին ծառայում մարտիկներին համար:

Կրելով քաղց, ցուրտ, նրանք իրենց հերոսութեամբ զբաղում էին վհատվածներին ու հոգնածներին: Հաճախ իրենց մահվամբ նրանք յեռանդ ու հեղափոխական հավատք էին ներշնչում անհավասար կովի մեջ թուլացած զորամասերին:

ՍՄԻՏԱԿ ՑԱՐԻՑԻՆԻ ՎՐԱ

Ցարիցինն ընկավ սպիտակ բանակների հարվածների տակ 1919 թվականի հունիսին: Սպիտակ թըշնամին՝ իրեն ատելի պրոլետարական կենտրոնում իր տիրապետութեանը հավերժացրեց կախաղաններով, գնդակահարութեաններով, տանջանքներով: Սարատովի տակ հեռացած տասներորդ բանակը կարգավորվեց, լրացրեց իր շարքերը և հրաման ստացավ հարձակվել Ցարիցինի վրա: XI-րդ բանակը, յետ շարքերով թշնամիներին Աստրախանի սահմաններից,

պետք է իր կողմից յեռանդագին նպաստեր X բանակին՝ նրա ծանր պարտականության մեջ: Նոյեմբերի վերջերին XI-րդ բանակի մասերն արդեն մոտեցել էին Յարիցինի արվարձաններին: Մի անգամ նույն խակ գնդերից մեկի առաջապահ մասերը ներխուժեցին հենց Յարիցին, բայց թշնամու գերազանց ուժերը լիկվիդացիայի յենթարկեցին Յարիցինը գրավելու այդ առաջին փորձը: Այդ ժամանակ Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակը հարավային լայնարձակ վողջ ճակատում արդեն անդիմադրելի կերպով սկսել էր հարձակումը և առաջն արած՝ հալածում Դենիկինի ցաք ու ցրիվ, կազմալուծված զորքերին: Դրա համար էլ՝ Յարիցինը վերցնելու խնդրի հետ միաժամանակ XI-րդ բանակին առաջադրված էր մի այլ խնդր՝ Աստրախանից ներգործել Ղզլարի վրա — Հյուսիսային Կովկասին տիրանալու նպատակով: Առաջին խնդիրը փայլուն կերպով լուծեց XI-րդ բանակը:

Յարիցինի պրոլետարիատի զայրույթն անհնարին էր զարձրել սպիտակ զորքերի հեղազա գոյությունը քաղաքում: Յարիցինի աշխատավորներն անհամբերությամբ էին սպասում Կարմիր բանակի յելույթին և պատրաստ էին ամեն տեսակ աջակցություն ցույց տալ կարմիր զորքերին:

Յեղանակն անհաջող էր Յարիցինի վրա հարձակվող XI-րդ բանակի համար, քաք յեղանակը հանկարծ փոխվում էր թափվող ձյունի, ապա խտառուունջ ցըրտերի: Յեղանակն առանձնապես զժվարացնում էր կարմիր հեծելազորքի դործողությունները: Ուշագրության չառնելով այդ, դեկտեմբեր 29-ին կարմիր զորամասերը դիմեցին վճռական հարձակման, քշելով

թշնամուն մի քանի կոիվերում և միմյանց յետևից գրավելով գեպի Յարիցինի արվարձանները տանող գյուղերը: Անմիջապես Յարիցինի տակ յեղած կռիվը խիստ դժան էր: Վոչ մեկ, վոչ ել մյուս կողմը գերիներ չէին վերցնում: Զարգացնելով իրենց հաջողությունները, 1920 թվականի հունվար 3-ի առավոտյան XI-րդ բանակի մասերը մտան Յարիցին: Թշնամին խուճապով սկսեց նահանջել, ձգելով թնդանոթներն ու ռազմամթերքը, վոր մեծ քանակությամբ ձեռք բերին մեր հարձակվող զորքերը: Յարիցին քաղաքի բանվոր բնակչությունը, վորը կրել էր սպիտակների տիրապետության բոլոր սարսափները և վոչ մի բուպ չէր ընդհատել հեղափոխական կռիվը նրանց դեմ, ցնծությամբ դիմավորեց կարմիր մասերին: Կազմակերպված բանվորական զինյալ գումարտակներն ոգնում էին կանոնավոր զորքերին՝ ջախջախելով թշնամուն: Թշնամին իր անգոր կատաղության վրեժը լուծեց, կործանելով յերկաթուղակայանները, ջըրմուղները, յելիքտրոկայանը:

Յարիցինը գրավելուց հետո, մի քանի ուր անց, բանակը դուրս շարտեց թշնամուն քաղաքի ամենամոտ արվարձաններից: Հեռացող սպիտակ-զվարդիականներն առանձնապես կատաղի դիմադրություն ցույց տվին կարմիր զորքերին Սարեպտայի տակ, վորտեղ թշնամին յետ շարտվեց կատաղի կովից հետո: XI-րդ բանակի մասերն այստեղ գրավեցին մեծ քանակությամբ պատերազմական պիտույքներ — թնդանոթներ, գնդացիներ, անասունի մեծաքանակ կեր և այլն: Յարիցինի գրավումը և Սարեպտայի տակ յեղած կռիվը նպաստեցին թշնամու զորքերի՝ առանց այդ էլ

ծայր տված քայքայմանը. թշնամու, վոր յերկար ժամանակ չեր կարողանում կազդուրվել և լուրջ դիմազրություն ցույց տալ մեր զորքերի հարձակողական պոթկումին:

Բանակի մասերը, վորոնց հանձնարարված եր ներզործել Ղզլարի վրա և այդ ուղու թյամբ մի շարք հաջողություններ ձեռք բերին ու կռվով գրավեցին թշնամու ամրացրած կետերը: Բայց հունվարի կեսերին թշնամին հավաքեց խոշոր ույժեր, դիմեց հարձակման և ճնշեց մեր ույժերը: Այդպիսով XI-րդ բանակը լուծեց իրեն առաջադրած խնդիրը, հաստատելով այս անգամ մեկ ընդ միշտ Կարմիր դրոշակը Յարիցինում (այժմ Ստալինգրադ): Կուսակցության և նրա գինվորական կազմակերպությունների լարված աշխատանքը, հրամանատարների և քաղաքական կազմի կողմից հեղափոխական մարտիկների շարքերում տարած անձնուրաց աշխատանքը տվավ արդյունավոր պոտուզներ:

Սպիտակ բանակը Յարիցինի տակ ստացավ կործանիչ, մահացու հարված, վորից հետո չկարողացավ իրեն շտկել:

ԲԱՆԱԿՆ ԱԶԱՏՈՒՄ Ե ՇՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՍՊԻՏԱԿ-ԳՎՐԱԴԻԱՅԻՑ.

Վերադարձնելով Յարեցինը Խորհրդային քաղաքների շարքը և ճեխքելով Աստրախանի շուրջը կազմված սպիտակ-գվարդիական պաշարումի ողակը, XI-րդ բանակը պատրաստում և ույժեր՝ Հյուսիսային Կովկասի վրա արշավելու համար: XI-րդ բանակի Ռազմա-Նեղափոխական Խորհուրդն այսպես վորոշեց բանակի

անելիքները Յարիցինի զրավումից հետո. «տակունությամբ ու համառությամբ մենք ջախջախեցինք թշնամուն: Դենիկինի զորքերը նահանջում են, մեր անելիքն այժմ այն պիտի լինի, վոր կազետներին շունչ քաշելու ժամանակ չտանք. ոգտվելով նրանց շարքերում տեղի ունեցող քայքայումից և միանալով Կովկասի ապստամբած աշխատավոր մասսաների հետ՝ մեր հաղթանակը պիտի հասցնենք հաղթական վախճանին»: Մարտիկները նետվում են այն տեղերը, վորոնցից յերբեմն դուրս եր յեկել XI-րդ բանակը: Քշել սպիտակ-գվարդիականներին Հյուսիսային Կովկասից, վերականգնել Խորհրդային իշխանությունը Հյուսիսային Կովկասում—ահա թե ինչ նպատակներով են շարժվում առաջ բանակի մասերը:

Իսկ թշնամու մասերը, շժամ Յարիցինի ու Սարևատայի տակ կերած հարվածներից, բաժանվեցին մի քանի առանձին խմբերի, վորոնք արագ հեռացան դեպի հարավ, խուսափելով մեր մասերի հետ շփվեցուց: Սկսվում է արագ հետապնդումն հեռացող թշնամու վերաբերմամբ: Բնակեցված կետերը մեկը մյուսի յետևից անցնում են մեր ձեռքը: Խորհրդային հանրապետության տերրիտորիան հետզհետե ընդարձակվում է:

Մեր կողմից գվավված շրջանների բնակչության վերաբերմունքը դեպի մեր մասերը խիստ կերպով փոփոխվում եր: Ճաշակելով սպիտակ-գվարդիականների տիրապետության բոլոր սարսափները, տեսնելով, թե ինչպես զենեալները վերականգնում են հին կարգերը, բնակչությունն ամբողջապես անցնում եր Կարմիր Բանակի կողմը: Բնակչության հետ լավ հարաբերություն հաստատելուն նպաստում եր այն աշխատանքը,

վորը տարված եր կուսակցութեան կողմից մեր գործ-
մասերում: Կուսակցութեանը հաշվի յեր առնում, վոր
բանակի վերագառնալու ժամանակ այն տեղերը, ուր
սպիտակներն հարվածների տակ ընկել էյին XI-րդ
բանակի մարտիկները, ուր Խորհրդային իշխանութեան
դեմ ապստամբած բնակչութեանը ավերել, քար ու
քանդ եր արել նահանջող կարմիր մասերի թիկունքը,
կարող ե վրեժխնդրութեան առաջ գալ բանակի մար-
տիկների մեջ: Յեմ կուսակցութեանը համբերատարու-
թեամբ բացատրում եր մարտիկներին, թե ինչպես
պիտի վերաբերվել ազատագրված շրջանների բնակ-
չութեանը: Այդ աշխատանքը պսակվեց լիակատար հա-
ջողութեամբ: Բնակչութեանը զիմափորում եր բանա-
կին համակրանքով, հայթայթում եր նրան պարեն,
սայլակներ ու ձիեր: Հյուսիսային Կովկասը սպիտակ-
գվարդիականներից մաքրելու գործում բանակին խո-
շոր ծառայութեան ցույց ավին կամավորական պար-
տիզան վաշտերը, վորոնք բոլորն էլ, մինչև բանակի
մասերի գալը, գրավել էյին Հյուսիսային Կովկասի ա-
ռանձին կետերը: Ներքին պայթյունից սպիտակ իշ-
խանութեանը շարտվեց Գրոզնի քաղաքից: Վերջին
կատաղի ընդդիմադրութեանը թշնամին մեզ ցույց
տվավ Ստավրոպոլի տակ: Նա համախմբում ե այստեղ
խոշոր ույժեր, լավ զիտակցելով, վոր Ստավրոպոլի
գրավումը կնշանակե սպիտակների իշխանութեան
վերջը Հյուսիսային Կովկասում: Ահա թե ինչն է յեն
աչքի ընկնում իրենց կատաղութեամբ Ստավրոպոլի
տակ մղված կռիվները, ահա թե ինչն է թշնամին այն-
պես մոլեգնաբար եր ջանում յետ մղել մեր հարձակ-
վող մասերը: Կոտրելով թշնամու զիմադրութեանը

կարմիր գործասերը ներխուժում են Ստավրոպոլ, սա-
կայն թշնամին հավաքում ե նոր ույժեր և փոքր ինչ
ճնշում մեզ:

Բայց անոգնու: Դա մեռնող թշնամու անհաջո-
ղութեան դատապարտված վերջին ջանքերն են:

Ստավրոպոլի անկումից հետո՝ շարունակվում ե
հաղթական արշավանքը դեպի հարավ: Թշնամու բա-
նակը վերջնականապես ցաք ու ցրել է լինում: Ճեր-
մակ զինվորները հազարներով գերի յեն ընկնում
կամ փախչում ստանիցաներն ու գյուղերը: Նրանց մի
մասը փախչում ե դեպի Սև ծովի ափերը, տեղափոխ-
վում արտասահման, սպիտակ բանակի մնացորդները
Սոչիի տակ գերի յեն ընկնում: Ավելի ակտիվ սպի-
տակ-գվարդիականների մի մասը փախչում ե ու թաք-
նվում մուսավաթականների թևի տակ՝ Ադրբեջանում
և մենչևիկների թևի տակ՝ Վրաստանում, փայփայելով
այդտեղից Խորհրդային իշխանութեանը վնասելու
միտքը: XI-րդ բանակը գրավում ե Վլադիկավկազը,
Պետրովսկ (այժմ՝ Մախաչ-Կալա): Պետրովսկի տակ
թշնամին փորձում ե ցույց տալ վերջին զիմադրու-
թեանը: XI-րդ բանակի ռազմական աշխատանքը Հյու-
սիսային Կովկասում ավարտված եր:

XI-րդ բանակի մարտիկները հաղթականորեն ան-
ցան այն տեղերով, ուր առաջ նահանջում էյին իրենց
նախորդները: Հեղափոխական ալիքը սրբեց տարավ
սպիտակ-գվարդիական քափը Հյուսիսային Կովկասում
ու կանգ առավ մենչևիկյան Վրաստանի և մուսավա-
թական Ադրբեջանի սահմանում:

XI-րԴ ԲԱՆԱԿԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՍԱՀՄԱՆԻ ՄՈՏ

Անդրկովկասը՝ Ռուսաստանում տեղի ունեցած պրոլետարական հեղաշրջումից հետո՝ չդարձավ խորհրդային:

Միայն կարճատև գոյություն ունեցավ տասնևութ թվականին կազմակերպված Բագվի կոմմունան:

Նա ընկավ ներինք հակա-հեղափոխության հարվածները տակ, ինչպես նաև ոկուպացիոն զորքերի, վորոնց հրավիրել էին ես-երները:

Անդրկովկասում կազմակերպվեցին յերեք բուրժուական հանրապետություններ, վորոնք անվանում էին իրենց անկախ, բայց փաստորեն իմպերիալիստական պետությունների բացահայտ հլու-հնազանդներն էին: Իմպերիալիստները վարվում էին այդ հանրապետությունների հետ այնպես, ինչպես իրենց սեփական գաղութներում:

Վրաստանում իշխանության դեկը իր ձեռքն եր առել մենշևիկների մանր-բուրժուական կուսակցությունը. Հայաստանում իշխանությունը գտնվում եր դաշնակցության մանր-բուրժուական կուսակցության ձեռքում. Ադրբեջանում կառավարում եր մուսավաթականների կուսակցությունը: Այդ բոլոր կառավարությունների ներքին քաղաքականությունն ուղղված եր բանվորների և գյուղացիների՝ իրենց դրությունը բարելավելու փորձերի դեմ:

Արտաքին քաղաքականությունն արտահայտվում եր համաշխարհային բուրժուազիային մատուցած ծառայությամբ, ամենից առաջ Սորհրդային Ռուսաստանի դեմ մղվող կովի բնագավառում:

Ահա թե ինչու այդ բոլոր հանրապետությունների տերրիտորիայում ապաստան էին գտնում և բարեկամական հանդիպում ունենում Սորհրդային իշխանության թշնամիները, մասնավորապես հակա-հեղափոխական սպայությունը, վորոնք ջաջախվել էին տասնևինն—քսան թվականներին Դենիկին ու Վրանգել գեներալների սպիտակ-գվարդիական բանակների հետ: Այդ ըսպիտակ-գվարդիական բանդաներն իրենց կարգի էին բերում Անդրկովկասի տերրիտորիայում, զինվում էին, իսկ հետո գաղտնի ձանապարհով անցնում Սորհրդային հանրապետությունների սահմանը:

Ազգային թշնամությունը, վոր բորբոքում եր ցարական կառավարությունը, ել ավելի լայն չափերի հասավ մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների իշխանության ժամանակ:

Նրանք կամենալով աշխատավորների ուշադրությունը հեռացնել Սորհրդային իշխանության համար մղվող հեղափոխական կովից, բորբոքում էին ազգամիջյան թշնամություն հանրապետությունների ներսում, այլև կովի մղում իրար դեմ: Ազգային փոքրամասնությունները Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում ձնշված էին և իրավազուրկ: Իսկ իրենք հանրապետությունները պատերազմում էին իրար դեմ, պահելով իրենց ույթերից վեր մեծ բանակներ:

Այդ հանրապետությունների միայն կոմմունիստական կուսակցություններն էին շարունակ ընդհատակյա աշխատանք տանում կազմակերպելու համար բանվորների ու գյուղացիների հեղափոխական ույթերը, վորոնք զգում էին իրենց անխղելի կապը Սորհրդային Ռուսաստանի աշխատավորների հետ, վորոնք

կովում եյին համաշխարհային պրոլետարիատի ազատագրութեան համար:

Ամենազաւթան խստութեաններն անգամ անգոր գտնվեցին, ի հարկե, ընդհատելու կոմմունիստների աշխատանքը, մանավանդ վոր խորացող քայքայումը Անդրկովկասյան հանրապետութեաններում հեղափոխականացրել էր բանվոր դասակարգին ու գյուղացիութեանը և ցույց տալիս ծանր կացութեանից դուրս գալու այն միակ յեղը, վորը պայմանավորված էր Խորհրդային իշխանութեան հաստատմամբ: Այդպես ուրեմն, XI-րդ բանակը բերելով իր հետ պրոլետարական հեղափոխութեան ջերմ շունչը, հենց մի անգամից արժանացավ ղեկավարող դասակարգերի թշուշտ ատելութեան և աշխատավորների ջերմ սիրույն. աշխատավորների, վորոնց մեծագույն մասը շատ լավ էր հասկանում XI-րդ բանակի ազատագրական դերը:

Բայց միաժամանակ պետք է նշել վոր բուրժուազիայի ազատ ապիտացիան, վոր սարսափելի բաներ էր վերագրում բուրժուական իշխանութեանը, ունեցավ վորոշ ազդեցութեան աշխատավորութեան մի մասի վրա:

Քսան թվականի սկզբում յերկու աշխարհներ հանդիպեցին միմյանց Անդրկովկասի սահմաններին սոցիալիստական հանրապետութեաններում Խորհրդային մատղաշ, հաղթական իշխանութեանը՝ լի ստեղծագործական սէրով նոր շինարարութեան գործում:

Այդ նոր իշխանութեան ցայտուն ներկայացուցիչը XI-րդ բանակն էր, վոր հաղթական քայլերով ծարիցիւնից անցել էր մինչև կովկասյան լեռները:

Մյուս կողմից կանգնել էյին իրենց ժամանակը մաշած, պետութեանը կառավարելու մեջ անընդունակ,

սեփական ժողովուրդների կողմից ատված բուրժուական կառավարութեանները:

Յե՛վ այդ հարեանութեան յուրաքանչյուր որը կրկնապատկում էր հեղափոխական տրամադրութեանը Անդրկովկասյան հանրապետութեանների ներսում: XI-րդ բանակի հարեանութեանը թելադրում էր Անդրկովկասի աշխատավորներին, թե սեփական և համաշխարհային բուրժուազիայի դեմ անխուսափելիորեն մղվելիք կովին կարող է գորեղ աջակցութեան ցույց տալ Խորհրդային հանրապետութեանների զինված ուժը:

ԲԱՆԱԿՆ ՈԳՆՈՒՄ Ե ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՅՅԱՆԸ՝ ՔՇԵԼՈՒ ՍՈՒՍԱՎԱԹԱԿԱՆՆԵՐԻՆ

Մոտենալով Անդրկովկասի սահմաններին, XI-րդ բանակը կարողացավ փոքր ինչ հանգստանալ՝ ծանր կոնվեքերից հետո:

Քաղաքական և լուսավորութեան աշխատանքի պայմաններն սկսեցին առաջվա համեմատութեամբ ավելի լավանալ, հնարավորութեան ստեղծվեց ընդլայնելու աշխատանքը՝ անգրագիտութեանը վերացնելու, գրույցներ անելու, խելացի զբաղմունքներ ստեղծելու գրույցներ անելու, իսկապես հարեանութեանը Անդրկովկասյան հանրապետութեանների հետ առատ նյութ էր տալիս աշխատանքների համար. մի բան, վոր շոշափելի էր պարտիկներին Խորհրդային և բուրժուական հանրապետութեաններին աշխատավորների դրութեան միջև յեղած խոշոր տարբերութեանը: Մարտիկներն զգում էյին, վոր վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորների համա-

կրանքը իրենց կողմն է: Բուրժուազիայի դեմ մղած կռիվում նրան անհրաժեշտ ոգնությունը ցույց տալու պայմանը խորապես թափանցում էր Կարմիր-բանակայիններին գիտակցության մեջ:

Այդ ժամանակվա ռազմական գործողություններից պետք է նշել սպիտակ-գվարդիական բանդաները լիկվիդացիայի յենթարկելու վերաբերմամբ տարվող աշխատանքը. այն բանդաների, վորոնք՝ սպիտակ ուլժերի ջախջախումից հետո՝ գտնվում էին չլուսխային Կովկասի զանազան տեղերում:

Իսկ այդ ժամանակ հեղափոխության ուլժերը պրոլետարական Բազվում ցնցում էին մուսավաթականների իշխանությունը: Կառավարության կողմից կազմակերպված բանակը չէր կարող նեցուկ լինել պրոլետարիատի դեմ:

Ադրբեջանի Կոմմունիստական կուսակցությունը, շատ լավ ըմբռնելով մուսավաթական իշխանության մոտարուտ անկումը, ծավալում էր յեռանդուն աշխատանք բանվորական մասսաների և բանակի մեջ:

Տասնևինն թվականի վերջից Ադրբեջանի Կոմմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեաը արդեն տանում էր նախապատրաստական աշխատանք՝ սպասամբություն կազմակերպելու նկատմամբ:

Աշխատավորների համակրանքը դեպի Կոմմունիստական կուսակցությունն այնքան մեծ էր, վոր չընայած ամենակատաղի հետապնդումներին, կուսակցության Կենտրոնական Կոմիտեաը տեղեկություն ուներ մուսավաթական կառավարության ձեռք առած բոլոր միջոցների մասին: Նրա վոչ մի գործողությունը,

նույնիսկ ամենազաղանին, թաքուն չէր մնում հեղափոխականների համար, վորովհետև ամեն տեղ — շտաբում, հեռագրատանը, պոստում կոմմունիստներն ունեյին իրենց մարդիկ: Բանն այնտեղ հասավ, վոր մուսավաթական կառավարության գինվորական միևիստրըն ստիպված էր իրենց պարլամենտում խոստովանել, թե բանակն ընդունակ չէ վոչ մի ռազմական աշխատանքի:

XI-րդ բանակի մոտեցումը Ադրբեջանի սահմաններին արագացրեց հանգույցի լուծումը: 1920 թվականի ապրիլ ամսի վերջերին բազվում կազմակերպված Հեղափոխական Կոմիտեաը կապ է հաստատում XI-րդ բանակի հրամանատարության հետ, նրան ոգնության հրավիրում մուսավաթականների դեմ: Մուսավաթական կառավարության թուլությունն ու կտրվածությունը լայն մասսաներից այնպես էին, վոր նա չըկարողացավ, վորևե լուրջ դիմադրություն ցույց տալ Բազվի հեղաշրջմանն ու XI բանակի առաջխաղացմանը:

Բազվի պրոլետարիատին՝ մուսավատիստների դեմ պայքարելու գործում ոգնում էր XI բանակի զրահագնացքը, վորի առաջապահն էր՝ «3 ինտերնացիոնալ» զրահապատը Կարմիր զրահագնացքները փայլուն կերպով վճռեցին այդ խնդիրը: Նրանք շտապ առաջացան, տապալելով և փախուստի մատնելով կայարաններում առանձին դիմադրող խմբերին: Արժանի է ուշադրության, վոր խմբերից մի քանիսը, ինքնահոժար վար էյին դնում զենքերն ու հրաժարվում էյին կռիվի խորհրդային իշխանության դեմ:

Բանակի հրամանատարութիւնը և ապստամբ-
ների հեղափոխական շտաբը յերկյուզ եր կրում, վոր
փախչող մուսավաթի կառավարութիւնը կարող եր
ֆուսսի Ադրբեջանի յերիտասարդ Սորհրդային իշխա-
նութեանը պայթեցնելով կարևոր շենքերն ու հրդեհելով
նավթային հանքերը: Այդ վտանգի առաջն առնվեց
զրահագնացքների այնպիսի արագընթաց մոտեցումով
Բազվին, վոր նրանք տապալեցին դիմադրող մասերը,
իսկ մուսավաթիստները ժամանակ չունեցան վոչ մի
ֆուսս հասցնելու Բազվին և վոչինչ չկարողացան դուրս
տանել այնտեղից:

Բազվի բանվորները, վորոնք իշխանութիւնը
փաստորեն վերցրել էին իրենց ձեռքը, նախ քան XI
բանակի հասնելը, ուրախութեամբ դիմավորեցին նը-
րանց Բազվա կայարանում: Կարճ ժամանակում սմ-
բողջ Ադրբեջանը ազատվեց մուսավաթիստների իշխա-
նութիւնից և այնտեղ հաստատվեց Սորհրդային իշ-
խանութիւնը, իբրև հաջորդ 1918 թվին տապալված
Բազվի Պրոլետարական Կոմմունայի:

Սկսվեց Սորհրդային իշխանութեան յետանդուն
շինարարութիւնը Ադրբեջանի բոլոր անկյուններում:
Նրա տերրիտորիայի վրա տեղավորված XI բանակի
մասերը, վոր Սորհրդային շինարարութեան հարուստ
փորձ ունեյին, գործոն աջակցութիւն են ցույց տա-
լիս տեղական աշխատողներին այդ դժվարին գործի
մեջ: Բանակը մեծ կուլտուրական աշխատանք ել ե
կատարում. Ադրբեջանի այնպիսի գյուղերում են ցույց
տրվում պատկերներ, վորոնք յերբեք կինո չէյին տե-
սել: Բանակի մասերի կուսակցական կազմակերպու-
թիւնները բազմաթիվ միտինգներ, զրույցներ և հա-

մերզներ են կազմակերպում: Նրանք գրավում են
գյուղացիների ահագին բազմութիւններ, վորոնք գա-
լիս են այդ տեսարաններին ներկա լինելու հեռավոր
գյուղերից:

Բանակը հազարավոր ձայներով, հարյուրավոր
միջոցներով պատմում ե Ադրբեջանի աշխատավորնե-
րին, աշխատավոր ժողովրդի անելիքների մասին սո-
ցիալական շինարարութեան բնագավառում: Բանակը
ինքը Ադրբեջան գալով՝ հնարավորութիւն ե ստանում,
ավելի լայն կերպով դնել քաղաքական լուսավորութեան
աշխատութիւնը: Մտեղծվում ե բանակային կենտրոնա-
կան ակումբ, կենտրոնական գրադարան, կազմակերպչա-
կան անգրագիտութիւնը վերացնող տասընթացքներ:

«Կարմիր Զինվոր» բանակային լրագիրը, քաղա-
քական ապարատը, կուսակցական կազմակերպութիւն-
ներ ահագին աշխատանք են կատարում կազմակեր-
պութեան համար Կարմիր բանակայինների հասարա-
կական կարծիքը՝ ազգային քաղաքականութեան հար-
ցերի շուրջը, վոր այնքան մեծ նշանակութիւն ունի
բազմացեղ Անդրկովկասում, ուր հարկավոր ե վե-
րացնել ցարիզմի և բուրժուական հանցավոր կուսակ-
ցութիւնների քաղաքականութեան հետեւանքները:

Բանակը շատ լավ եր յուրացրել այդ դժվարին
հարցի կարևորութիւնը: Մենք վոչ միայն չենք հան-
դիպել վորևե թյուրիմացութեան ազգային հողի վրա,
Կարմիր բանակայինների և տեղական ազգաբնակու-
թեան միջև, այլ նույն իսկ շատ դեպքեր գիտենք յերբ
զորամասերը, իրենց բացատրութիւններով ոժանդա-
կել են Ադրբեջանի ազգութիւնների միջև յեղած թյու-
րիմացութիւնների վերացմանը: Այդ հանգամանքը

ոժանդակել ե կարմիր բանակի և Սորհրդային իշխանության հեղափոխության ամբապնդվելուն: Սորհրդային Ադրբեյջանի սահմաններից շատ հեռու, Արևելքի ճնշված ժողովուրդների մեջ:

Կովկասյան ճակատի հրամանատարը (այդ ճակատի մեջ եր մտնում XI բանակը) բանակն Ադրբեյջան հասնելուց հետո, զորատես կատարելիս, զարմանում ե կարմիր մարտիկների առույգ տեսքի և կեցվածքի վրա, վորոնք դժվար ուղղմական ճանապարհ եյին կտրել Յարբեյից մինչև Բագու: Հրամանատարը դիմելով զորքին ասաց:

«Ձեր քաջագործությունները անմահ են: Նրանք կը մտնեն պատմության մեջ: Իսկ այսօր թող լինեն ձեզ պարզև ուրախության ազադակները մայրենի Ադրբեյջանի Սորհրդային հանրապետության քաղաքացիների, վորոնք նայում են ձեզ իբրև բարեկամների և յեղբայրների»: Այն քաղաքական լուսավորության աշխատությունը, վորի մասին ասված ե վերը, միանգամայն հասկանալի յե դարձնում այդ՝ դեպի բանակը հիացմունքով լի վերաբերմունքի պատճառը, վորի մասին խոսում ե ճակատի հրամանատարը:

Այդ ժամանակաշրջանի ուղղմական դեպքերից անհրաժեշտ ե հիշատակել բանակի աշխատանքը խոսվությունները վերացնելու գործում, այն խրովութունները, վոր առաջացրել եյին հակահեղափոխականները Դադստանում և Գանձակում: Հակահեղափոխականները, վոր սպրտել եյին մենշևիկյան Վրաստանից Դադստան, հիմնվելով Դադստանի հարուստների վրա, վորոնց Սորհրդային իշխանությունը զրկել եր հարստությունից և լեռնաբնակ չքավոր մասսաների վրա

ունեցած իշխանությունից,—կարողացել եյին զրպարտության միջոցով ապստամբեցնել լեռնաբնակների մի մասը, Դադստանի Սորհրդային իշխանության դեմ: Մոլլաները, վոր մեծ հեղինակություն եյին վայելում ազգաբնակչության մեջ, նույնպես ոժանդակում եյին հակահեղափոխական ապստամբության զարգացմանը: Պայքարը ծայր աստիճան դժվար եր, զինվորական գործողությունները պետք ե կատարվեյին չափազանց լեռնոտ տեղերում, վոր անմատչելի եր հրետանի համար, Եւր մի տասնյակ տեղին ծանոթ, փորձված հակահեղափոխականներ կարող եյին կանգնեցնել ամբողջ գունդերի շարժումը:

Ապստամբ հակահեղափոխականներն անգլիորեն եյին վարվում իրենց ձեռքը գերի ընկած կարմիր բանակայինների հետ:

Կարմիր բանակը այդ պայքարում, ինչպես միշտ, բացի զինքից, լայնորեն ոգտվում են ագիտացիոն բացատրական աշխատանքից, հասկացնելով խաբված լեռնականներին, վոր նրանց ապստամբեցնողներն աշխատավոր ժողովրդի թշնամիներին են:

Կուսակցական կազմակերպություն այդ աշխատությունը բեկում, առաջացրեց ապստամբների արամադրություն մեջ, և անմիջապես բաժանեց չքավորների շերտը նրանց առաջնորդներից: Այդպիսով վերջ տրվեց ապստամբության:

Գանձակի ապստամբությունը կազմակերպել եյին մուսավաթիստները, վորոք, ոգտվելով Սորհրդային իշխանության յերիտասարդությունը և անփորձությունը, ընդհատակյա աշխատանք եյին կատարել, կազմակերպելով Սորհրդային իշխանությունից դժգոհներին և

կան կուսակցութիւնը միաժամանակ ահազին աշխատանք և կատարում, տալով նոր կազմակերպվող բանակին՝ զինվորական կոմիսսարներ և այլ քաղաքական գործիչներ: Այդ բոլոր աշխատութեան ձեռներեցութիւնը պատկանում է ընկ. Կարախին Ա. Կ. Կ. Կ. Կ. (բ) այժմյան քարտուղարին:

Զորամասերում կազմակերպվում են կոմմունիստական բջիջներ, վորոնք աշխույժով գործի յեն կըստնում: Իսկ աշխատութիւնը իսկապես վոր ծանր երեսեղական գործիչները բոլորովին զուրկ եյին բանակ կազմակերպելու փորձից, զուրկ եյին նույնպես բանակում քաղաքական աշխատութիւն վարելու փորձից: Հրամանատարական կազմ չկար բոլորովին, վոր կարողանար առաջնորդել զինվորական մասերը: Վնչ ձեռնարկներ և վնչ կանոնադրութիւններ կային թուրքերեն լեզվով: Զինվորական հրամանատարութեան լեզուն չէր մշակված: Ցարական կառավարութեան քաղաքականութիւնը Ազրբեջանի վերաբերմամբ, այն տեղն եր հասցրել, վոր Սորհրդային կառավարութեան բանակը հարյուր տոկոսով կազմված եր անգրագետ ասիյարներից: Թվում եր, թե այդպիսի պայմաններում անհնար ե նույնիսկ յերազել շատ թե քիչ ուժեղ զինվորական մասերի մասին: Սակայն բանվոր դասակարգի ստեղծագործական ուժը, Ազրբեջանի Կոմմունիստական կուսակցութեան անշեղ կամքը սկսեցին մաքառել այդ դժվարութիւնների դեմ և հաղթեցին նրանց: Հենց առաջին որերից հաջողվեց այն աստիճան կազմակերպել զինվորական ուժերը, վոր նրանք կարողացան մասնակցել պարսկական արշավանքին, վորի ընթացքում XI-րդ բա-

նակի մասերը և Ազրբեջանի բրիգադայի մասերը ոչնեցին Պարսկաստանի աշխատավորներին ապստամբվել Անգլիայի իմպերիալիստական լծի և պարսկական ժանդարմերիայի դեմ: Ազրբեջանի զորամասերը իրենց սեպական ամբութիւնը ցուցադրեցին մի շարք ընդհանրամասն ամբութիւն խմբերի հետ, վորոնք յերբեմն-յերբեմն անհանգստացնում եյին խաղաղ ազգաբնակչութեանը:

Ազրբեջանի զինամասերի բանվորա-գյուղացիական հրամանատարական կազմ ստեղծելու համար, վոր յոր կազմակերպվեց հրամանատարական դպրոց, վոր յոր կազմութեան ընթացքում, մի քանի հարյուր հեղափոխական հրամանատարներ պատրաստեց: Վերջին շրջանավարտների 46% բանվորներ եյին, 53% գյուղացիներ, 29% կուսակցականներ, 61% կոմիստիկներ, վորը փայլուն ապացույց եր, թե Սորհրդային Ազրբեջանը ինչպես ե լուծել իր խորհրդային հրամանատարներ կրթելու դժվարին խնդիրը: Կազմակերպանապես աշխատավորների շարքերը: Կանոնադրական աշխատավորների շարքերը, վոր խոչընդոտութիւնների և ձեռնարկների պակասը, վորացվում ե, հրա-եր հանդիսանում, աստիճանաբար վերացվում ե, հրատարակելով նրանց թուրքերեն լեզվով: Ազրբեջանի կարմիր զորամասերի լավագույն բնորոշումը տվել ե ընկ. Ֆրունզեն հետեյալ խոսքերով. «Ազրբեջանի զինվորան անճանաչելի յե, մենք տեսանք մարտիկ անվեհերութիւնն և տոկունութիւնը:

Այս բնորոշումը տրված ե 1923 թվին, այսինքն այն ժամանակ, յերբ զինվորական հաղթահարել եր մի միայն սկզբնական հիմնական դժվարութիւնները իր շինարարութեան ճանապարհի վրա:

մազբությունը թույլ եր: Դեկտեմբերի սկզբին ամբողջ Հայաստանը դարձավ Խորհրդային յերկիր:

Հայաստանում կազմակերպված Խորհրդային իշխանությունը սկսեց բուժել այն ծանր վերքերը, վոր ժառանգություն եր մնացել դաշնակներից: Առաջին հերթին նա խաղաղ հարաբերություն հաստատեց Տաճկաստանի հետ: Ի հարկե, Ազրբեջանի հետ ել թըշնամության ատիթները վերացան:

Հայաստանը ուժառու է, այնտեղ սոփո է իշխում: XI-րդ բանակը, ինքը վոչ բավականաչափ մատակարարված, տեսնելով իր տանջվող յեղբայրների ծանր վիճակը, յեղբայրական նվեր է մատուցում իր ունեցածից 50 վագոն այլուր: Սակայն պետք եր անցկացնել այդ նվերը մենշեիկյան վրաստանի վրայով, վորովհետև Ազրբեջանը Հայաստանի հետ անմիջական յերկաթուղային կապ չուներ: Մենշեիկները զանազան պատրվակներով մերժում են թույլ տալ անցկացնել իրենց յերկրով Հայաստանի սովատանջ բանվորների և դյուղացիների համար հացով բեռնած վագոնները: Նրանք շահագրգռված յեն ցուցադրելու, վոր Հայաստանի յերիտասարդ Խորհրդային իշխանությունը չի կարողանում մաքառել սովի դեմ: Այն ժամանակ XI-րդ բանակի հրամանատարությունը վճռում է կանգ չառնել դժվարությունների առջ և սայլերով հաց փոխադրել Հայաստան: Բանակը իր վճիռը ի կատար է ածում: Չյունի հաստ շերտով պատած ճանապարհներով սայլերով հաց է հասցնում Հայաստան: Այդպիսով, մենշեիկների զգվելի մտադրությունը չի իրագործվում և XI-րդ բանակը կրկին անգամ ցու-

ցադրում է իր յեղբայրական զգացմունքները դեպի Հայաստանի աշխատավորությունը:

Խորհրդային իշխանության հաստատվելուց անմիջապես հետո, Հայաստանի Կոմկուսը սկսում է յեռանդուն աշխատանք տանել Կարմիր բանակ կազմակերպելու համար: Այդ շինարարության դժվարությունները գրեթե նույնն եյին, ինչպես և Ազրբեջանում: Սակայն ինչպես և Ազրբեջանում, այդ դժվարությունները հաղթահարվեցին Կոմմունիստական կուսակցության կամքով և տոկուն աշխատանքով: Յեվ Հայաստանի տնտեսության աճման չափով ամբողջապես բերվում էյին և նրա զինվորական մասերը, սերտորեն կապված Հայաստանի բանվորների—գյուղացիների ամբողջ մասսաների հետ: Հարկավոր է նկատել յոր հայկական նորակազմ զինվորական մասերը իրենց կազմակերպության հենց առաջին ամիսներին, հնարավորություն ունեյին ցուցադրելու զինվորական քաջություն և հեղափոխական կայունություն:

1921 թվի փետրվարի 18-ին, յերբ բանակի գլխավոր ույթերը զբաղված էյին մենշեիկյան վրաստանի դեմ կռվելով, դաշնակները ապստամբություն կազմակերպեցին և կարճ ժամանակով տիրացան Յեկադեմիտին և Հայաստանի մի մասին, հուսալով շարունակել իրենց արկածախնդրությունները, վոր այնքան թանգ էյին նստել աշխատավոր ժողովրդին: Բանակի նորակազմ հայկական մասերը սկզբում շատ դժվար հաղթանակներում պաշտպանվում էյին հարձակվող դաշնակներից և 45 ուր, բանակի գլխավոր ույթերից կտրուկված, կռիվեք էյին մղում պաշտպանելով յերկրի այն մասը, վոր մնացել եր Խորհրդային իշխանության մասը, վոր մնացել եր Խորհրդային իշխանության

ձեռքին: Վնչ սովը, վնչ սառնամանիքը և վնչ հրազե-
նի պակասը չտատանեցին կոփողների հեղափոխական
վրդին: Հետագայում այդ զորամասերը XI-րդ բանա-
լի վերահաս ույթերի հետ միասին մաքրեցին Հայաս-
տանը դաշնակցական ավազակախմբերից և մասնավոր-
ապես դուրս քշեցին նրանց Զանգեզուրից: Այդ
կովի մեջ դարբնվեց հայկական կարմիր մասերի կուռ
կորիզը:

Հայաստանի Կոմկուսը իր լավագույն ուժերը
նվիրեց զիվիզիայի մասերի ամրապնդման: Զորամա-
սերի կուռակցական կազմակերպությունների քաղու-
սավորական աշխատանքը լայնորեն տարածվեց: Կար-
միր հրամանատարների նորակազմ դպրոցը տարեց-
տարի պատրաստում էր բանվորա-գյուղացիական հրա-
մանատարներին նոր կազմ: Կազմակերպվում է նոր
դպրոց՝ պատրաստելու համար վաշտերի քաղաքական
ղեկավարներ: Յեվ բանվորա-գյուղացիական Կարմիր
Բանակի 10-ամյա հորեկյանին հայկական կարմիր մա-
սերը ներկայանում են իբրև Խորհրդային Միության
սոցիալիստական շինարարությունը պաշտպանող զո-
րեղ ուղղման միավորներ: Այդ զինվորական մա-
սերը իրենց միջազգային յեղբայրական զգացմունք-
ներն ապացուցեցին, յերբ 21 թվին շտապեցին ոգնե-
լու Վրաստանի աշխատավորներին, վորոնք ապրա-
տամբվել էին մենշևիկներին դեմ:

**ԲԱՆԱԿԸ ՈԳՆՈՒՄ Ե ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ
ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻՆ ՎՐՆԴԵԼՈՒ**

Մենշևիկները իրենց ձեռքն առնելով Վրաստա-
նում իշխանությունը, իրենց պատկանող անունը՝

բանվոր դասակարգի դավաճաններ— լիովին արդարաց-
րին: Շաղակրատելով դեմոկրատիայի և սոցիալիզմի
մասին, նրանք իրենք քաղաքականությամբ, յերկի
հերսում ուժեղացրին բուրժուազիայի զրությունը, իսկ
նրանք իրենք քաղաքականության մեջ նրանք յեղան հա-
արտաքին քաղաքականության մեջ նրանք յեղան հա-
մաշխարհային իսկական լաքեյները, ծառայելով այն
տիրոջը, վորը սվյալ բուրժուային ուժեղ էր: Դրա համար
եւ Վրաստանի վաստացի տերերը, սկզբում գերմա-
նացիք էին, իսկ հետո անգլիացիք: Այդ պետու-
թյունների ներկայացուցիչները Վրաստանում իրենց
զգում էին ինչպես պարտված յերկրում և մենշևի-
կյան կառավարություն հետ խոսում էին այն տերե-
րի նման, վորոնք անհնազանդություն չէին սիրում:
Անգլիական հրամանատարություն ամեն մի հրաման՝
նույնիսկ ամենաստորացուցիչը անկախ պետություն հա-
մար՝ ինչպես իրենք մենշևիկներն էին անվանում
Վրաստանը— լուռ ու մունջ կատարում էին մենշևիկ-
ները: Վրաստանի բնական հարստությունները թա-
լանվում էին Անգլիայի ոգտին: Անգլիան ցանկա-
նում էր Անդրկովկասյան հանրապետություններից
իրեն համար ստեղծել ուղղադաշտ ՌԽՍՖՆ դեմ պա-
տերազմական զործողություններ վարելու համար և
մենշևիկյան կառավարությունը հաճույքով ընդունում
էր փախստական սպիտակ զվարդիականներին և նը-
բանց գնեք էր մատակարարում: Մասնավորապես մեն-
շևիկյան Վրաստանից էր գնում գենքը Դաղստանի
հակահեղափոխականներին, նույն Վրաստանից էին
անցնում ապստամբություն կազմակերպիչները: Անգ-
լիայի հրամանով մենշևիկներն իրենց յերկրով ձամփա-
տվին Դենիկինի սպիտակ ավազակախմբերի մնացորդ-

ներին, վորոնք հետագայում գնացին Վրանգելին հե-
նելու: Թնդանոթները վորոտով և գնդացիները ճար-
ճատյունով եյին պատասխանում մենշևիկները ոսերի,
աբխազները և աջարցիները ամենաորինական պահանջ-
ներին՝ նրանց ինքնավարութուն տալու մասին: Մին-
չև այժմ էլ Հարավային Ոսեթիան՝ վորի գյուղերը բը-
նաջնջվել են մենշևիկների հրետանիով՝ զեռ չի բու-
ժել իր վերքերը: Բացի կանոնավոր զորքից, մենշևիկ-
ները ստեղծեցին սեփական կուսակցական ժողովրդա-
կան գվարդիան, վորն անողոք եր գեպի աշխատա-
վորները և վայրագարար ճնշում եր ապստամբներին
ու հետապնդում եր կոմմունիստներին:

Այդպիսով մենշևիկյան գեմոկրատիկ Վրաստա-
նում շատ լավ եյին զգում իրենց հարստահարողները
իսկ բանվորներն ու գյուղացիները տառապում եին
ինչպես բանտում: Յերբ բռնկվեց պրոլետարական հե-
ղափոխության բոցն Ազրբեջանում և Հայաստանում,
արդեն պարզ եր, վոր հասել է ժամը մենշևիկները
տիրապետությանը Վրաստանում: Մենշևիկները կորց-
նում եին իրենց վտաքի տակի հողը: Վրաստանի կոմ-
մունիստական կուսակցությունը յեռանդուն աշխա-
տանք եր տանում ապստամբութուն պատրաստելու
համար: Շնորհիվ ՌԽՍՖՀ հետ կապած պայմանագրի,
մենշևիկները ստիպված եին կոմմունիստական կու-
սակցությանը թույլ տալ լեզալ աշխատանք վարելու,
բայց յերբ նրանք տեսան թե ինչ անագին ազդեցու-
թյուն է ձեռք բերում կուսակցությունը բանվորական
մասաներում՝ իսկույն ևեթ ամենածանր ճնշումներ
սկսեցին գործադրել կոմմունիստական կուսակցության
պարագլուխների վրա: Մենշևիկների իշխանության

վերջին ամիսները նշանակալից յեղան կոմմունիստների
և անկուսակցական բանվորների դեմ գործադրված
վայրենի սպիտակ տերորով:

Մենշևիկների դեմ գործողությունները սկսվում
յեն Լոռու գավառում, ուր ապստամբները զինաթափ
եյին արել ժողովրդական գվարդիան և կազմակերպել
Վրաստանի հեղափոխական կոմիտե, վոր ոգնության
կանչել XI բանակի մասերը, ինչպես վոր երա ժա-
եր կանչել XI բանակի մասերը, ինչպես վոր երա ժա-
մանակին արել եր Հայաստանի Հեղկոմը: Մենշևիկյան
վրաստանի վրա հարձակումը երեք ուղղությունով եր
առաջանում: Մենշևիկները կատաղի զինադրություն
ցույց տվին Թիֆլիսի մոտ, Կոջորի բարձրությունների
վրա, վորտեղ ապստամբների խմբերը և XI բանակի
մասերը ստիպված եյին յետ մղել հակառակորդի մի
շարք հակադրոհները: Բանակի գործողությունները
ճակատում և Թիֆլիսի բանվորների ճնշումը մենշևի-
կյան կառավարության վրա՝ ստիպեցին մենշևիկներին
թողնել Թիֆլիսը և նահանջել արևմտյան Վրաստանի
շրջանները: Կովով նահանջող մենշևիկները հետապն-
դումը տիղի ունեցան Սուբամ լեռնանցքով դեպի Քու-
թայիս և Գողերի լեռնանցքով դեպի Բաթում: Հիշա-
թայիս և Գողերի լեռնանցքով յեյն 33 հրացանածիլ զիվիլիայի
տակության արժանի յեն 33 հրացանածիլ յեյն 33 հրացանածիլ
զիվիլիայի տակության արժանի յեն 33 հրացանածիլ յեյն 33
99 բրիգադի գործողությունները, վոր գալիս եր Հյու-
սիսային Կովկասից ռազմա-ոսեթյան ճանապարհով,
Մամիստոնի լեռնանցքով, վոր ծածկված եր ձյունով և
տարվա այդ ժամանակին (փետրվարին) անմատչելի յեր:
Բրիգադը հաղթեց բոլոր խոչնդոտներին, վոր զրել եին
բնությունն ու մենշևիկյան բանակը:

Յերկու ուրվա կուիկներից յետո, թշնամին քշվեց
Սուբամի լեռնանցքից և բանակի մասերը գրավեցին

Բաթումը: Մենչևիկները՝ կողոպտած հարստությունն առած՝ անգլիական շոգենավերով փախան Կոստանդինուպոլիս: Մենչևիկյան կառավարության այդ դավաճանական գործը այնպիսի սպավորություն գործեց ժողովրդական բանակի Բաթումում գտնված մասերի վրա, վոր նրանք ճանաչեցին խորհրդային կառավարության իշխանությունը և սկսեցին կատարել նրա հրամանները: 21 թվի մարտի 19-ին Հեղափոխական Կոմիտեյի իշխանությունը արդեն տարածված եր ամբողջ Վրաստանի վրա:

Սկսվեց խորհրդային իշխանության շինարարությունը Վրաստանում, վոր չափազանց բարդանում եր այն հանգամանքի շնորհիվ, վոր աշխատավորների մի վորոշ մասի վրա՝ մենչևիկների ազդեցությունը շարունակվում եր և մենչևիկյան կառավարության տապալիկուց յետո ել: Մենչևիկներն իրանց տիրապետության ժամանակ բոլշևիկներին մասին ամեն տեսակ հերյուրանքներ եին տարածում և մասնավորապես սարսափեցնում եին ազգաբնակչությանը Կարմիր Բանակի անելիք վայրագություններով: Սակայն կրթական աշխատանքը, վոր անընդհատ տարվում եր XI բանակի մասերում, այնպես եր դաստիարակել Կարմիր բանակը, վոր նույն իսկ նրա ամենակատաղի թըշնամիները վոչ մի առիթ չեին գտնում, վորպեսզի մեղադրեն նրան վորեւ անկարգության մեջ:

ԿՍՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

խորհրդային Վրաստանի զինված ուժի կազմակերպումը սկսվեց ընկեր Լենինի ուղղակի ցուցմունքի համաձայն: 1921 թվի մարտի 3-ին, ընկ. Լենինը ուղիղ գծով Վրաստանի կոմունիստներին մի շարք ցուցմունքներ և առլիս նրանց ապագա գործունեության մասին՝ կատարված խորհրդային հեղաշրջումից հետո: Սրանց թվում առաջին հերթին հետևեալը՝ «Անհրաժեշտ և շուտափույթ զինել բանվորներին և ամենաչքավոր գյուղացիներին վրացական Կարմիր Բանակ կազմելու նպատակով»: Մի քիչ յետո ընկ. Լենինը գրում և ընկ. Որջոնիկիձեին. «Բացարձակորեն անհրաժեշտ և, վոր Վրաստանի խորհուրդներին համագումարը վորոշում կայացնի վրացական Կարմիր Բանակի ուժեղացման մասին»: «Այս կարգադրությունը չըկատարելու դեպքում Ձեզ կուսակցությունից կըհեռացնենք հաշվի չառնելով վոչ մի պատճառաբանություն»: Մարտի 11-ին Վրաստանի Հեղկոմը դեկրետ և հրատարակում վրացական Կարմիր Բանակի կազմակերպման մասին: Այդ դեկրետը միաժամանակ ցրում և հին բանակը և ժողովրդական զվարդիան:

Վրաստանի Կոմունիստական կուսակցությունը շատ ջանք և թափել հանրապետության զինված ուժերը կազմակերպելու վրա: Ադրբեջանում և Հայաստանում զինվորական շինարարությանը խանգարող խոչընդոտները զգալի չափով տեղի ունեին և այնտեղ: Բացի այդ, աչքի առաջ պետք և ունենալ, վոր Վրաստանում գտնվող բազմաթիվ սպաներին կարելի եր ոգտագործել միայն մեծ զգուշությունով, վորովհետև նրանց տրամադրությունները չեին համապատասխանում խորհրդային իշխանության խնդիրներին: Արդեն 1922 թվին վրացական մասերը ստացան՝ խորհրդային հրամանատարական դասընթացներն անցած առաջին

բանակի մատուցած ծառայութեանը ի վարձատրու-
թյուն վորոշում ե տալ նրան Կարմիր Դրոշ, իսկ բա-
նակը վերանվանել Կովկասյան Կարմրագրոշ Բանակ
(Կ. Կ. Բ.): Այդ փառավոր անունով ել ապրում ե աշ-
խատում ե մեր բանակը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐԸ

Մեր գրքոյկի սկզբում Բանվոր-Գյուղացիական
Կարմիր Բանակը մենք անվանեցինք պրոլետարական
գլխատուրայի սուր:

Կովկասյան Կարմրագրոշ Բանակի վերը հիշված
պատմութիւնը ապացույց ե այդ անվան ճշտութեանը:

Ո՞վ ե սրել այդ սուրը, ո՞վ ե ուղղել նրա խոր-
տակիչ հարվածները թշնամիների դեմ, ո՞վ ե պատ-
րաստում բանակը համաշխարհային խմբերիալիքմի դեմ
առաջակայում մղվելիք կովի համար:

Մենք արդեն տեսանք, վոր Կովկասյան Կարմրա-
գրոշ Բանակ կազմակերպողն ու նրան հեղափոխական
պայքարի համար վոզկորոզը Կոմունիստական կուսակ-
ցութիւնն ե: Այդ նա յեր ցույց տալիս Հյուսիսային
Կովկասի բանվորներին, գյուղացիներին, կողակներին,
թե ինչպես պետք ե կովել սպիտակ գվարդիականներ
դեմ խորհրդային իշխանութեան համար: Նա եր կեն-
դանի ուժով ե հեղափոխական եներգիայով լցնում
Կարմիր Աստրախանի համար կովոզներին, վորոնք յետ
քշեցին քաղաքին մոտեցող բոլոր թշնամիներին: Նրա
ճիգերով ե կամքով վերածնվեց XI բանակը:

Կովկասյան Կարմրագրոշ բանակի կազմակեր-
պումն ու ռազմական աշխատանքը, ինչպես տեսանք,

տեղի յե ունեցել Ադրբայջանի, Հայաստանի ե Վրաս-
տանի Կոմունիստական կուսակցութիւնների անմիջա-
կան ղեկավարութեամբ: Նրանք կարողացան աջողեց-
նել, վոր չափազանց դժվար պայմաններում դարբնվե-
ցին ամուր ազգային զորամասեր, վորոնք պատվով
տեղ յեն բռնել Բանվոր-Գյուղացիական Կարմիր բա-
նակի հին ռազմական մասերի միաձուլլ պողպատյա
շարքերում:

Ինչպես ե իրագործում Կոմունիստական կու-
սակցութիւնը իր ղեկավարութիւնը բանակում: Կար-
միր Բանակի ամեն մի մասի գլխին խորհրդային կա-
ռավարութիւնը կարգել ե մի հրամանատար, վոր
անձամբ վարում ե հրամանատարութիւնը, պատաս-
խանատու հանդիսանալով խորհրդային իշխանութեան
առաջ նրա դրութեան ռազմական պատրաստականու-
թեան համար: Կարմիր Բանակի կազմակերպութեան
դեռ սկզբնական շրջանում հրամանատարի կողքին
կարգվում եյին կոմիսսարներ՝ Կոմունիստական կու-
սակցութեան լավագույն ներկայացուցիչներէց: Նրանք
վոչ միայն կուսակցական ե քաղաքական աշխատու-
թեան ղեկավարն եյին, այլ ե հրամանատարի գործո-
ղութիւնների վերահսկիչ: Այդ անհրաժեշտ եր այն
ժամանակ, յերբ խորհրդային իշխանութիւնը դեռ
չուներ սեփական հրամանատարների կազմ բանվոր-
ներից ե գյուղացիներից, ինչպես այդ տեղի ունեցավ
հետագայում, յերբ հին զինվորական մասնագետների
թվից դեռ զուրս չեյին եկել բոլորովին հուսալի ույ-
ժեր, պատրաստ կովելու մինչև վերջը խորհրդային իշ-
խանութեան համար: Այժմ կոմիսսարները զորամասե-
րում խորհրդային իշխանութեան ե Կոմունիստական

կուսակցութեան ներկայացուցիչը հանդիսանալով, հրամանատարի հետ հավասարապես պատասխանատու լինելով զորամասի զրուկեան մասին, միաժամանակ, գլխավորապես, պարտավոր չեն ղեկավարելու բոլոր կուսակցական, կոմյերիտական և քաղաքա-լուսավորական աշխատութեանները, վորոնց հետեանքով և դարբնվում է կարմիր Բանակի մարտիկները հեղափոխական գլխակցութեանը: Զորամասերի բաժանմունքներում կան քաղաքական ղեկավարներ (քաղղեկ), վորոնք վարում էին կարմիր բանակայինների քաղաքական կրթութեան և ուսուցման գործը: Նրանք պատասխանատու չեն քաղաքա-լուսավորական աշխատանքի համար բաժանմունքներում:

Ամեն մի առանձին միավորում (վաշտ, մարտկոց, եսկադրոն, հիմնարկ) գոյութեան ունեցող կուսակցական և քաղլուս աշխատանք տարվում է կոմիտսարի ընդհանուր ղեկավարութեամբ: Կուսակցական բջիջները հանդիսանում են կոմիտսարների և քաղաքական ղեկավարների հիմնական հենակետը նրանց աշխատութեան ընթացքում և հրամանատարի կամ պետի մերձավոր ոգնականները: Նրանք կազմակերպում էին զոնբաց նիստեր, վորոնց ներկա էին գտնվում անկուսակցական կարմիր բանակայինները: Այդ նիստերին քննութեան են առնվում Սորհրդային Միութեան, առանձին Սորհրդային հանրապետութեան, կամ նրա վորև է առանձին շրջանի քաղաքական և տնտեսական կյանքի բոլոր կարևորագույն հարցերը: Բջիջի անդամները քննում էին զորամասում կատարվող քաղաքական և լուսավորական աշխատանքի զրուկեան հարցերը և նշում էին զորամասը ամրապնդելու

նպատակով կուսակցութեան անդամների անելիքները: Բջիջներում քննութեան էին առնվում միջադային քաղաքականութեան հիմնական հարցերը: Կարմիր բանակայինների լայն զանգվածները ներկա գլխակցութեան հարցերը և այդպիսով բարձրացնում էին իրենց զարգացման աստիճանը և, իրենց վարքի մեջ հետևելով կուսակցութեան անդամներին, ավելի ևս ամրապնդում էին կարմիր Բանակի շարքերը: Կոմիտսարները որինակելի կարմիր բանակայիններ պետի հանդիսանան և ըստ մեծի մասին հանդիսանում են, վորոնց հետևում են մնացյալ կարմիր բանակայինները: Բացի այդ, կուսակցութեան անդամները ռազմական աշխատանք են կատարում առանձին կարմիր բանակայինների հետ և նրանց խմբերի հետ, ամեն որ համբերութեամբ և անդուլ բացատրելով նրանց հետաքրքրող և հուզող հարցերը: Այդպիսի աշխատանք են կատարում և կուսակցութեան աջակցող խմբերը, վոր կազմակերպվում են կոմյերիտներից:

Հատկապես կազմակերպված խմբերում ամեն որ յերկուական ժամ խմբավարները (հաճախ՝ ջոկատների հրամանատարները) քաղաքական պարապմունքներ են վարում: Այդ պարապմունքները տարվում են շարունակ, մինչև վոր կարմիր բանակայինը գտնվում է բանակում: Բոլոր հիմնական քաղաքական և տնտեսական հարցերը, վորոնց գլխութեանը անհրաժեշտ է ամեն մի գլխակից քաղաքացու համար, մտնում են այդ պարապմունքների յերկամյա ծրագրի մեջ և քննութեան են առնվում զրույցների ընթացքում, վորտեղ կարմիր բանակայինը կատարյալ հնարավոր

բուժյուն ունի ամենամանրագննին կերպով պարզել
իր համար բոլոր մուժ հարցերը: Բացի այդ՝ յերե-
կոները, հանգստի ժամերին, լայնորեն ծավալվում ե,
այսպես անվանված, արտադարձորոցային աշխատանքը:
Ակումբում ներկայացուցներ են տրվում, բեմադրու-
թյուններ, զեկուցումներ են տեղի ունենում, կինո-
պատկերներ են ցուցադրվում: Վաշտերում (մարտ-
կոցներում, եակադրոններում) կազմակերպված յեն
Լենինյան անկյուններ, վորտեղ իրենց՝ կարմիր բա-
նակայինների ուժերով կազմակերպվում են զրույց-
ներ, զեկույցներ, առանձին խմբերում պարապմունք-
ներ, իրանց՝ կարմիր բանակայիններին հետաքրքրող
հարցերի շուրջը: Գնդերի գրադարանները և վաշտերի
կոլլեկտիվ բաժանորդագրուժյունը՝ գիրքը մտտեցնում
են ընթերցող կարմիր բանակայիններին: Լրագրներ
են բերել արվում, վորոնք պահվում են Լենինյան
անկյուններում և բարձրաձայն կարդացվում են բոլոր
կարմիր բանակայիններին կամ ամեն մեկը նրանցից
կարդում ե առանձին: Հրատարակվում ե բանակային
լրագիր՝ «Կարմիր Բանակային» անունով («Красный
Воин»), խկ ազգային դիվիզիաներում հրատարակ-
վում են կարմիր բանակայինների մայրենի լեզուներ-
ով (Կղըլ Ասկյար), Հայաստանում «Կարմիր Զին-
վոր», Վրաստանում «Ծիթելի Արմիելի»: Բոլոր պա-
տի, դիվիզիական և բանակային լրագրներում մաս-
նակցում են իբրև թղթակիցներ հազարավոր կարմիր
բանակայիններ—զինվորական թղթակիցներ: Քաղաք-
ապամունքների ընթացքում կարմիր բանակայինների
անգրագիտությունը վերացվում ե: Քաղաքական լու-
սավորության աշխատանքների վերոհշյալ բազմա-

թիվ տեսակները կիրառության դեպքերում հիմնական
դերը պատկանում ե կուսակցական կազմակերպու-
թյան, վորը այդպիսով այստեղ ել կատարյալ հնարա-
վորություն ունի կուսակցության ազդեցությունը
տարածել կարմիր բանակայինների լայն զագվածների
վրա:

Զինկոմները, կուսակցական և կոմյերիտական
կազմակերպությունները, քաղաքական ղեկավարների
այս բոլոր աշխատանքները՝ կարմիր բանակայինների
հանգստի ժամերին՝ նպատակ ունեն գործակցել հրա-
մանատաների աշխատանքներին՝ կարմիր բանակային-
ների ռազմական պատրաստության գործում, պատ-
րաստել նրանց վորպոս Բանվոր-գյուղացիական Բա-
նակի զինվորներ: Չարգացած, քաղաքականապես կըր-
թված կարմիր բանակայինը ավելի լավ ե յուրացնում
զինվորական գործի բոլոր հիմքերը, ռազմական գի-
տակցությամբ ե մասնակցում բոլոր զինվորական աշ-
խատություններին, ավելի լավ յուրացնում այն յեր-
կաթյա հեղափոխական դիսցիպլինան, վոր ամրացնում
ե Բ. Գ. Կ. Բ. շարքերը:

Զինվորական պարապմունքների, լայն քաղաքա-
կան-լուսավորական աշխատանքների և յերկաթյա հե-
ղափոխական կարգապահության զուգորդությունը ամ-
րապնդում ե ռազմական տեսակետից կարմիր Բանակը:

Այսպես ե իրագործում կուսակցությունը իր դե-
կավարությունը կարմիր Բանակում:

Բոլոր կուսակցական և քաղաքական լուսավորա-
կան աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը
դիվիզիայում իրադործում ե զեվիզիայի Քաղաքական
Բաժինը (Քաղդիվ), վորին գլխավորում ե բաժնի պետը:

Դիվիզիայի քաղաքական բաժանմունքներին, իսկ կարևորագույն հարցերում և զորաբաժինների զինկոմներին ղեկավարում է շրջանի Քաղաքական Վարչությունը (մեզ մոտ Կ. Կ. Բ.-ում՝ Բանակի Քաղաքական Վարչությունը՝ Կ. Կ. Բ. Վ.): Իսկ գերագույն ղեկավարությունը պատկանում է Բ. Գ. Կ. Բ.-ի Քաղաքական Վարչության՝ Կ. Բ. Վ., վոր Համամիութենական Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի Զինվորական Բաժինն է ներկայանում:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԸ—ԳԻՏԱԿԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐԻ ԴԱՐԲՆՈՑՆ Ե

Կ. Կ. Բ.-ը ամենամուրթերով կապված է Խորհրդային Միության ազգաբնակչության և մասնավորապես Անդրկովկասի հանրապետությունների բանվորների և գյուղացիների հետ: Բանվորական կազմակերպությունները շեֆություն են վերցնում Կ. Կ. Բ.-ի առանձին մասերի վրա, անձնական կապ են պահպանում կարմիր բանակայինների հետ և ոգնում են նրանց կուլտուրական-լուսավորական աշխատանքներին: Զորամասերը իրանց շեֆական աշխատություն են վարում առանձին գյուղերում, ժամանակ առ ժամանակ ուղարկելով այնտեղ գործիչներ, յերբեմն խորհրդի ընթերցաններ, յերբեմն գեկուլցյներ և ներկայացուցիչներ կազմակերպելու համար: Կարմիր բանակայինների հետ դաստիարակչական աշխատություն կատարելու հետևանքով մանկավարժները, վոր հին կարգերում գյուղացիների համար կատարյալ ազետ էյին ներկա-

յացնում, այժմ միայն ուրախություն են պատճառում նրանց, շնորհիվ կուլտուրական սերտ կապի գյուղացիության հետ, վոր հաստատվում է մանկավարժների ժամանակ:

Յերկրային զորամասերը, վոր լայն ցանցով տարածվել են Ա. Խ. Ս. Ֆ. Հ. բոլոր շրջաններում, առավել ևս կապում են բանակը ազգաբնակչության հետ: Այնտեղ, ուր զորակոչի համար պատրաստվելու կենտրոններ կան, ուր բնակություն ունեն յերկրային զորամասերը, լայնորեն ծավալվում են զիովորական և քաղաքական աշխատանքները ազգաբնակչության մեջ: Յերկրային զորամասերի փոփոխական կազմը մեծ մասամբ սերտորեն կապված է լինում իր զորամասի հետ վնչ միայն ընդհանուր զորահավաքների ժամանակ, յերբ նա տարին մի անգամ, մի ամսով, կոչվում է ընդհանուր զորահավաքի, այլ և ֆնացյալ ժամանակ: Յերբեմն յերկրային զորամասերի կուլտուրական աշխատանքը այս կամ այն շրջանում լինում է միակ աշխատանքը, վոր կատարվում է այդտեղ լուսավորություն գծով ժողովրդի համար:

Յերկամյա լարված աշխատանքը զինվոր-քաղաքացի պատրաստելու գործում՝ մեծ մասամբ կատարելապես կերպարանափոխում է յերիտասարդ քաղաքացուն: Յերկամյա իսկական ծառայությունից հետո արձակուրդ գնացող կարմիր բանակայինը բոլորովին նրման չի այն յերիտասարդ նորակոչին, վոր ամեն աշնան մտնում է կարմիր Բանակի շարքերը:

Թե վորքան է փոխվում կարմիր բանակայինների ընդհանուր դեմքը բանակի շարքերում յերկու տարի ֆնալուց հետո, կարելի է յեզրակացնել հետևյալ

թվական ավյալներից, վորոնցից կարելի յե հասկացողութիւն կազմել Կ. Կ. Բ.-ի համեմատաբար յերիտասարդ մասերի՝ նրա ազգային ղեկիղիանների աշխատանքի մասին: 1902 թվականին ծնված կարմիր բանակայինների զորամասում յեղած ժամանակ, վրացական N հրաձանաձիգ ղեկիղիայում անգրագետները 43,4% էյին կազմում, ադրբեջանյան ղեկիղիայում՝ 60,8%, հայկականում՝ 41,5%, իսկ յերկու տարի բանակում մնալուց հետո արձակուրդ գնալիս այդ թվերը իջել էյին վրացականում 0,2%, ադրբեջանականում՝ 2,6%, հայկականում՝ 1,2%: Յեզ գեռ այդ չնչին թրվերի մեջ են այն անգրագետ մնացածները, վորոնք զանազան պատճառներով անընդունակ են գրագիտությունը յուրացնելու: Բանակից մեկնող՝ 1902 թվին ծնված՝ բոլոր կարմիր կանակայինների թվից, ամենագործոն մասնակցութիւն ունեյին արտադպրոցային աշխատանքների մեջ, այսինքն ղեկավարներ էյին հանդիսանում այս կամ այն տեղակի սկզբնական աշխատանքներում, ամբողջ կազմի 30%-ը: Հասարակական հիմնարկութիւնների (Մոսպր, Ոսո-Ավիտքիմ, կորչի անգրագիտութիւնը ընկ.) զանազան ղեկավար աշխատանքներին մասնակցել են կարմիր բանակայինների 5-ից մինչև 20%: Ազգային ղեկիղիաներից արձակվածների 11%-ը ղինթղթակիցներ են յեղել բանակում: 54% գրքերի մշտական ընթերցողներ են յիղել: Բացի այդ, առանց վորևե չափազանցութիւն կարելի յե ասել, վոր արձակված կարմիր բանակայինների ճնշող մեծամասնութիւնը բանակում լրագիր կարգալու պահանջ էյին ձեռք բերել, ցանկանալով տեղեկութիւն ունենալ յերկրի վրա տեղի ունեցող կարե-

վորադույն դեպքերի մասին: Բանակի նույն ազգային ղեկիղիաներում 1700 հոգի վերջին ամսում անցել են հատուկ դասընթացներ, վորտեղ պատրաստում են կարմիր բանակայիններին գոյուղի գործնական աշխատանքների համար զանազան բնագավառներում:

Ինքն ընտտ ինքյան հասկանալի յե, վոր մեկնողներից ամեն մեկը հաստատորեն յուրացրել է ռազմական գիտելիքները, զենքը ձեռքին պայքարել գիտե աշխատավոր ժողովրդի թշնամիների դեմ:

Հասկանալի յե, որ կարմիր բանակայունների կուտուրական և քաղաքական մակարդակը բարձրանալը ազդում է նրանց կուսակցական դրութիւն վրա: Բանակի կուսակցական կազմակերպութիւնը՝ կարմիր բանակայիններից գիտակից քաղաքացիներ դարբնելով՝ կատարյալ հնարավորութիւն ունի նրանց միջից ընտրութիւն անել Կոմյերիտութիւն համար: Դրա մասին վկայում յեն հետևյալ թվերը. վրացական N ղեկիղիան մտել յեն՝ Հ. Կ. Կ. (բ) անդամներ 0,4%, թեկնածուներ 0,7%, Կոմյերիտ անդամներ 8,8% և անկուսակցականներ 90,1%: ադրբեջանյան ղեկիղիան՝ 0,5% Հ. Կ. Կ. (բ) անդամներ, 0,3% թեկնածուներ, 8% Լ. Կոմյերիտ անդամներ, 90,2% անկուսակցականներ. հայկական ղեկիղիան՝ 0,6% Հ. Կ. Կ. (բ) անդամներ, 1,2% թեկնածուներ և 10,3% Լ. Կոմյերիտ անդամներ, 87,9% անկուսակցականներ: Մեկնողների կազմի մեջ մենք ունենք—վրացական N ղեկիղիայում՝ 2,2% Հ. Կ. Կ. (բ) անդամներ, 5,9% թեկնածուներ, 13,3% Լ. Կ. Յե. անդամներ և միայն 78,6% անկուսակցականներ: Ադրբեջանյան ղեկիղիայում— 4,4% Հ. Կ. Կ. (բ) անդամներ, 18,2 թեկնածուներ, 16%

Լ. Կ. Յե. անդամներ և 61,4⁰/₀ անկուսակցականներ, հայկական դիվիզիայում՝ 2⁰/₀ Լ. Կ. Կ. (բ) անդամներ, 6⁰/₀ թեկնածուներ, 11³/₀ Կոմյերիտ անդամներ և 81⁰/₀ անկուսակցականներ: Այսպես Կարմիր Բանակը իր անդուլ աշխատանքի շնորհիվ կերպարանափոխում է կարմիր բանակայինների կուլտուրական մակարտակը և առաջ է քաշում նրանց կոմմունիզմի համար պայքարողների առաջին շարքերը:

Հարկ կա արդյո՞ք ապացուցելու, վոր մեր ազգային հանրապետությունների համար նրանց զինված մասերը վոչ միայն պատվար են հանդիսանում և՛ Ս. Ն. Մ. թշնամիների դեմ, այլ և դարբնոց գիտակից քաղաքացի-դեկավարների, վորոնց անհամբեր սպասում է և վորոնց այնքան կարոտ է մեր գյուղը:

Մենք կարճառոտ աչքի անցրինք մեր Կովկասյան Կարմիր Բանակի ռազմական ուղին, ինչպես Բանվոր-Պյուղացիական Կարմիր բանակի բաժանմունքներից մեկի ուղին: Այժմ մենք գիտենք, վոր բանակը միայն հաղթություններ ու պարտություններ չէ, վոր ունեցել է իր անցած յերկար ռազմական ճանապարհի վրա: Հազարավոր կովոդներ ընկել յեն, խորհուրդների Կարմիր դրոշակը պաշտպանելիս: Բանակը և Անդրկովկասի ամբողջ աշխատավոր ժողովուրդը պիտի հիշեն ընկածների պատգամը մեր յերջանկության, մեր ազատության համար և պիտի աշխատեն նմանվել նրանց ռազմական արիության մեջ, հեղափոխական ինքնազոհության մեջ:

Կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ և՛ Ս. Ն. Մ. բանվոր դասակարգը և գյուղացիությունը սոցիալիզմ են կառուցանում. Կոմմունիս-

տական կուսակցության ղեկավարությամբ դարբնվում է բանվոր-գյուղացիական Կարմիր Բանակի զորությունը: Այդ ղեկավարությունը անպարտելի յե դարձնում խորհրդային Միության բանվորներին և գյուղացիներին: Եվ համաշխարհային կապիտալիզմի հետ գալիք ընդհարումներին՝ փոշի կըղտունան այն բոլոր ուլթերը, վոր մինչև այժմ ճնշում յեն աշխատավորներին յերկրագնդի հինգ վեցերորդական մասի վրա:

Հավերժ հիշատակ ընկած հերոսներին:
Նրանց պատգամները կատարելով՝ ամրացնենք և՛ Ս. Ն. Մ. պաշտպանությունը:



Faint, illegible text visible through the paper, likely bleed-through from the reverse side of the page.



«Ազգային գրադարան»



NL0221630

40.504

20 կող.

1
2



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏՈՒ
Թիֆլիս, Ռուսթավելու պող. 24, հեռ. 22-80: